

ՆԱԽԱԳԱՀ ԼԱՀՈՒՏ ԴՐՈՒՄՆԻՔՈՎ ԿՎԻՏԱՅԱՅՏՈՒԻ ԼԻԲԱՆԱՆԵՏԻՖԻԿԱՆ ՄԱՍԻՆ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ ՄԱՍԻՆ

Հանրապետության նախագահ զոր. Էմիլ Լահուտ երկվ դրուատիքով խոսեցաւ լիբանանեւֆրանսական յարաբերութիւններուն մասին, դիտել տալով, որ անոնք անկեղծ եւ հարազատ արտայայտութիւններն են երկու ժողովուրդներու հասարակ յայտարարներուն:

Ֆրանսա Լիբանանի տագնապի օրերուն մնաց անոր կողքին, եւ քաղաքական, տնտեսական, ընկերային եւ կրթական ոլորտներէն ներս իր գորակցութիւնը չզրկեցաւ, ըսաւ նախագահ Լահուտ, հաստատելով, որ Ֆրանսա կը շարունակէ օժանդակել Լիբանանի՝ Մայիս 2001ին Ֆրանսա իր տուած այցելութեան ընթացքին նախագահ Ժաք Շիրաքի հետ համաձայնուած առաջնահերթութեանց հիմամբ:

Շար.ը՝ էջ 3

Լ. Յ. Դ. ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԻՒՆ ՄԸ ՄԱՍՆԱԿՅԵՅԱԻ «ՍՊԱՌՈՂԻ ԵՒ ՀԱՐԿԱՏՈՒԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹԵԱՆ ԵՐԿԻՕՍՈՒԹԵԱՆ ՍԵՄԻՆԱՐ»ԻՆ

«Սպառողի եւ հարկատուի պաշտպանութեան կառավարական եւ ոչ - պետական կազմակերպութիւններու երկխօսութեան սեմինար»ը գումարուեցաւ երէկ, էսթրալի կեդրոնատեղիին մէջ, մասնակցութեամբ տնտեսութեան նախարար Պասէլ Ֆլէյճանի: Ներկայ էին երեսփոխաններ, տնտեսական եւ ընկերային հարցերու խորհուրդի նախագահ Ռոմէ Նասնաս, ճարտարաբանութիւնի միութեան նախագահ Ժաք Սարրա՝, Աշխատանքային ընդհանուր համադաշնակցութեան նախագահ Ղասսն Ղըսն, ինչպէս նաեւ կուսակցութիւններու եւ կազմակերպութիւններու ներկայացուցիչներ:

Ներկայ էր նաեւ Լ. Յ. Դ. Պաշտպանութեան Լիբանանի կեդրոնական կոմիտէի պատուիրակութիւնը, որուն անունով խօսք առաւ Ստեփան Տէր Պետրոսեան: Ան իր խօսքին մէջ ըսաւ, որ «համաձայն ենք առեւտրական մենաշնորհներու ջնջումին, որովհետեւ անիկա քաղաքացիներուն օգտակար քայլ մըն է»:

Ժողովի աւարտին հրապարակուած հաղորդագրութիւնը վեր առաւ կառավարութեան եւ ոչ - պետական կազմակերպութիւններու երկխօսութեան անհրաժեշտութիւնը՝ տնտեսական եւ ընկերային հարցերու լուծման ի խնդիր:

Հաղորդագրութիւնը ըսաւ, որ ժողովը զօրակցութիւն յայտնած է առեւտրական մենաշնորհներու ջնջման որոշումին, յանձնարարելով հսկել յաւելեալ արժէքի տուրքի գործադրութեան եւ որդեգրել սպառողի պաշտպանութեան յատուկ օրէնք:

ՈՒՄԻԱ

ՓՈՒԹԻՆ ՊԱՇՏՈՆԱԶՐԿԵՅ ՓՈՆ ՎԱՐԶԱՊԵՏ ԸԼԵՊԱՆՈՎԸ

ՄՈՍԿՈՒԱ, 18 (ՌՈՑԹԸԸԸ).— Ռուսիոյ նախագահ Վլատիմիր Փութին երկուշաբթի օր պաշտօնագրկեց փոխ վարչապետ Իլիա Քլեպանովը, որ ստանձնած էր առեւտրական ընկղմած «Քուրսք» սուզանաւուն հետաքննութեան աշխատանքներուն հսկողութեան պատասխանատուութիւնը: Թերի աշխատանքին հետեւանքով, ան պաշտօնագրկուած է:

Կրեմլինը յայտարարեց, որ Իլիա Քլեպանով փոխ վարչապետի իր պաշտօնը կորսնցուց եւ հետեւաբար պէտք է կեդրոնական իր աշխատանքներուն վրայ, իբրեւ ճարտարաբանութիւն, գիտութեան եւ արհեստագիտութեան նախարար:

Հետախուզողները իրենց արդիւնքներուն մէջ ճշգրիտ եզրակացութեան մը չեն յանգած աղէտին գծով, սակայն յստակ է, որ «Քուրսք»ը ի վիճակի չէ եղած ծովային գործողութիւններ կատարելու եւ ունեցած է շտապ օգնութեան տկար դրութիւն:

Կրեմլինի մամուլը գրասենեակը տեղեկացուցած է, թէ Քլեպանով պիտի շարունակէ իր պատասխանատուութիւնը Ռուսիոյ գինուորական ճարտարաբանութի կառուցի մէջ, սակայն այսուհետեւ պատասխանատու պիտի չըլլայ երկաթուղիներու, հաղորդակցութեանց եւ կորիզային ուժանիւթի նախարարութիւններուն:

Երկաթուղիներու եւ կորիզային ուժանիւթի նախարարութիւններուն պիտի հսկէ վարչապետ Միխայիլ Քասիանով, յայտնեց նախագահ Փութինի բանբեր Ալեքսէյ Կրեմով: «Քուրսք» սուզանաւը 2000 Օգոստոսին ընկղմած էր ներքին պայթուցիչներու պատճառով: «Քուրսք»ի աղէտին գոհ գացած էին 118 նաւազններ:

ՀԱԿԱԻՍՐԱՅԵԼԵԱՆ ՊԱՂԵՍՏԻՆԵԱՆ ԵՐԿՈՒ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒԵՅԱՆ ԵՐԷԿ ԻՍՐԱՅԷԼ ՄՏԱՆՈՎ՝ ՊԱՂԵՍՏԻՆԵԱՆ ԱՆՁՆԱՊԱՆԱԿԱՆ ՆՈՐ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԸԱԻԱՆԱԿԱՆՈՒԹԵԱՄ



Ականուած ինքնաշարժի մնացորդները:

Իսրայէլ կը պատրաստուի դիմագրաւելու պաղեստինեան անձնասպանական նոր գործողութիւններ՝ երէք կասկածելիներ՝ ձերբակալելէ ետք: Վարչապետ Արիէլ Շարոնի բանբերը՝ Ռասան Կիսիւն ըսաւ, որ բոլոր ապահանջները ցոյց կու տան, որ պաղեստինեան ծայրաշեղական շարժումներ անձնասպանական գործողութիւններու նոր ալիքի մը պիտի ձեռնարկեն Իսրայէլի դէմ: Կիսիւն աւելցուց, որ Իսրայէլի կառավարութիւնը այս շաբթուան ընթացքին պիտի քննարկէ ռազմավարութիւնը, որ պիտի որդեգրուի կանխարգիլելու համար պաղեստինցիներուն յարձակումները, որոնք թափ ստացան անցեալ շաբթուան մէջ:

Իսրայէլի ապահովութեան աղբիւրները հաղորդեցին, որ երէք պաղեստինցիներ ձերբակալուեցան Կիրակի գիշեր: Ապահովութեան ուժերը կ'ենթադրեն, որ անոնք կը պատրաստուին անձնասպանական գործողութիւն մը կատարելու Իսրայէլի մէջ: Իսկ Իսրայէլի հիւսիսային շրջանի խուսափաբանները կը քաջաբանէին, որ կարծաժամանակ մը ետք,

նստիկանութիւնը սպաննեց պաղեստինցի մը, որ երկրորդ պինեալի մը հետ ակնուած ինքնաշարժ մը պիտի պայտարարուէր: Ոստիկանները կասկածելով կանգնեցուցած են ինքնաշարժը, սակայն պինեալները կրակ բացած են անոնց վրայ: Վիրաւորուած են երէք ռազմականներ: Պաղեստինցիներէն մէկը սպաննուած է, իսկ երկրորդը յաջողած է փախուտ տալ ինքնաշարժով, որ կարծաժամանակ մը ետք,

պայթած է, աւելցուց ռազմականները: «Աքսայի նահատակներու փաղանգը» ստանձնեց գործողութեան պատասխանատուութիւնը: Շարժումին կողմէ հրապարակուած յայտարարութիւնը վերստին կը սպառնար Իսրայէլի, նշելով, որ սպանութեան պիտի պատասխանեն սպանութեամբ, քանդումին՝ քանդումով: «Սիոնականներն ու անոնց ժողովուրդը կ'սպառնան սպանութի չզգան՝ այնքան

ատեն, որ անոնք գրաւուած կը պահեն մեր հողերը» կը նշէր նաեւ յայտարարութիւնը:

Կիսիւն մեղադրեց պաղեստինեան իշխանութեան նախարարները:

Շար.ը՝ էջ 3

ՊՈՒՇԻ ԴԵՄ ԴԱՏԱՊԱՐՏՈՒՄԻ ԵՒ ԲՈՂՈՔԻ ԱԼԻՔ՝ ԾԱՅՐԱԳՈՅՆ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԱՆՈՐ ՇՐՁԱՊՏՈՅՏԻՆ ԸՆԹԱՅՔԻՆ



Պուշ Եւ Բոլղումի

Մ. Նահանգներու նախագահ Ճորձ Պուշ երէկ զօրակցութիւն յայտնած է Ճափոնի վարչապետ Եուիչի-րո Քոյզումիի եւ անոր առաջարկած տնտեսական բարեկարգութեան շանդէպ, մինչ ճափոնցի ղեկավարը կ'ըսէր, թէ երկիրը կորսնցուցած է իր ինքնավստահութիւնը:

Թրեքիոյ մէջ Քոյզումիի հետ մամուլի ասուլիսի մը ընթացքին, Պուշ յայտարարած է, թէ կը վստահանոր ղեկավարի կարողականութեան, մինչ Քոյզումիի նահանջող ժողովրդականութիւնը հարցականներու գուռ կը բանար անոր կարողականութեան մասին, ինչ կը վերաբերի բարեկարգութեան կիրարկելու հարցին:

Քոյզումի ըսած է, թէ 10 տարի առաջ Ճափոն «թերեւս քիչ մը չափազանցեալ ձեռնարկներ արեւելքէն ելած է: Այժմ կորսնցուցած ենք մեր ինքնավստահութիւնը»:

Քոյզումիի կողքին, Պուշ դարձեալ արծարծած է «չարութեան առանցք»ի նիւթը՝ թիրախ ունենալով Իրաքը, Իրանը եւ Հիւսիսային Քորէան, իբրեւ ապօրինի պետութիւններ, զորս պէտք է չհզօրացնել:

Ճափոնի վարչապետը զօրակցութիւն արտայայտելով, շնորհակալ է, թէ պէտք է առաջ տանիլ ահաբեկչութեան դէմ պայքարը:

Աւելի ուշ, օրուան ընթացքին, խաղաղութիւն հետապնդող շուրջ 200 ցուցարարներ՝ յայտարարելով, թէ «պատերազմը պատասխանը չէ», քայլարշաւ մը կատարած են իբրեւ բողոք Պուշի «չարութեան առանցք»ին վերաբերող արտայայտութիւններուն:

Շար.ը՝ էջ 3

ԱՅՂԱՆԻՍԱՆ

ՈՒԱՇԻՆԿԹԸՆԻ ՀԱՄԱԶԱՅՆ՝ ՈՒՍԱՄԱ ՊԸՆ ԼԱՏԷՆԻ «ՔԱՅԻՏԱ» ՑԱՆՅԸ ՑԱԿԱԻՆ ՍՊԱՌՆԱԼԻՔ ԿԸ ՆԵՐԿԱՅԱՅՆԷ

Մ. Նահանգներ երէկ յայտնած են, թէ աւելի մեծ ճիւղեր անհրաժեշտ են ԱՖղանիստանը եւ անոր փոխանցման վարչակարգը կայունացնելու համար, նկատի ունենալով, որ հակառակ թայեպաններու տակալումին՝ Ուսամա Պըն Լատէնի «Բալիստ» ցանցը սակաւին սպառնալիք կը ներկայացնէ:



Զօր. Մալլըր

Ամերիկեան սպանակոյտի ընդհանուր հրամանատար զօրավար Ռիչըրտ Մալլըրը Հնդկաստան երկօրեայ այցելութեան մը ընթացքին յայտնած է, թէ ամերիկացի «բանալի» երեսփոխաններու համաձայն՝ ԱՖղանիստանի մէջ պատերազմը գլխաւորաբար վերջ գտած է: «Կը կարծեմ, թէ անիկա նոր կը սկսի», շնչած է ան: Ամերիկացի զօրավարը տեսակցութիւն ունեցած է արտաքին գործոց նա-

խարար Ճաստուանթ Սինկհի եւ բանակի ընդհանուր հրամանատար Էս. Փատմանապահին հետ: Մալլըրը պաշտպանութեան մարզի ամերիկացի բարձրաստիճան նորագոյն պաշտօնատարն է, որ Հնդկաստան կ'այցելէ: Երկու երկիրներուն միջեւ կապերը ջնջմացած են Նիւ Տելհիի արագօրէն զօրակցութիւն արտայայտելէն ետք՝ Սեպտեմբեր 11ի օդային յարձակ-

կուսներուն իբրեւ հակադրութիւն Ուաշինգթոնի գինուորական գործողութեան:

Մինչ այդ, Փաքիստան երէկ մերժած է ընդունիլ Հնդկաստանի վարչապետ Աթալ Դիւրի վաճառի այն յայտարարութիւնը, թէ Ուսամա Պըն Լատէն կրնայ երկիրն մէջ պահուցուած ըլլալ, զայն «բողոքովին անհիմն» որակելով:

Վաճառի Շարաթ օրթթակիցներու ըսած է, թէ Փաքիստան կրնայ ամէնչէն ապահով ապաստան ըլլալ Պըն Լատէնի:

Միւս կողմէ, ԱՖղանիստանի մէջ Սէյուտական Արաբիոյ ղեկավար Ալի Սաիտ Աուտ Ասերի երէկ ըսած է, թէ ինքնավստահ է, որ ԱՖղանիստանի իշխանութիւնները իրենց երկիրը պիտի ղրկեն Պըն Լատէնի հատարիմ մէտոցի զինեալներ, որոնք ձերբակալուած են ԱՖղանիստանի պատերազմին ընթացքին:

Շար.ը՝ էջ 3

ՎԱՐՉԱՊԵՏ ՆԱՐԻՐԻ ՎԵՐԱԳԱՐՁԱՒ ՓԱՐԻՉԷՆ, ԱՆ ՎԱՂԸ ԿԸ ՄԵԿՆԻ ԻՏԱԼԻԱ

Վարչապետ Ռաֆիկ Նարիրի երեկ կեսօրէ եւր Պէյրութ վերադարձաւ Փարիզէն, ուր նախանցեալ գիշեր փեակցած էր նախագահ Ժաք Շիրաքի հետ: Անոնք արժարժան էին «Փարիզ 2» փութակաւ համաձայնագիրին կապուած հարցերը:

ՓԵՏՐՈՒՄ 28Ի ԳՈՐԾԱԴՈՒԼԸ ԿԸ ՄՆԱՅ Ի ԶՕՐՈՒ

Աշխատանքական ընդհանուր համադաշնակցութեան պատգամաւորներու խորհուրդը երէկուան իր ժողովին միաձայնութեամբ վաւերացուց գործադիր խորհուրդի առաջարկը՝ Փետրուար 28ին ընդհանուր գործադուլ, ցույցեր եւ նստացուցքներ կատարելու գծով:

ԵՄԷՆԻ

ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԸ ՊԷՅՐՈՒԹԻ ՄԷՁ

Եմէնի խորհրդարանի նախագահ Ապտալա Ահմար, որ ոչ պաշտօնական այցելութեամբ մը կը գտնուի Լիբանան, երէկ այցելեց լիբանանցի իր պաշտօնակիցին՝ Նեպիի Պըրրիի. ան յայտնեց, որ Լիբանան կը գտնուի մասնակցելու Երուսաղէմի հիմնարկի խնամակալութեան ժողովին:

Ան դրուատեց Պըրրիի արարական եւ պատւաբեր կեցուածքները, եւ հաստատեց, որ Լիբանան բացած է իր դռները արաբական բոլոր դատերուն վերաբերեալ ժողովներուն դիմաց:

ՍՈՒՐԻՈՅ ԵՐԻՏՐԱՍԱՐԴՈՒԹԵԱՆ ԵՒ ՄԱՐՄՆԱԿՐԹՈՒԹԵԱՆ ՆԱԽԱՐԱՐԸ ՎԱՂԸ Կ'ԱՅՑԵԼԷ ՊԷՅՐՈՒԹ

Երիտասարդութեան եւ մարմնակրթութեան նախարար Սեպուհ Յովհաննէս վաղը՝ Չորեքշաբթի, Սուրիոյ կրթութեան նախարար Մահմուտ Մայէտի հետ պիտի ստորագրէ երիտասարդական եւ մարզական բնագաւառներէն ներս գործակցութեան համաձայնագիրը:

Նախարար Յովհաննէս սուրիացի պաշտօնատար պիտի դիմադրէ Մասնաշաղկի սահմանները հետ պիտի ստորագրէ համաձայնագիրը: Այնուհետեւ անոնք պիտի այցելեն փոխ վարչապետ Իսամ Ֆարէսի, ապա նախարար Յովհաննէս ճաշկերոյք մը պիտի տայ ի պատիւ սուրիացի իր պաշտօնատարին:

ՎԱՆԱՅ ԶԱՅՆ
Այսօր երեկոյեան ժամը 6:00ին կրնաք ունկընդորել մեր հարցազոյցը՝ հայրենի սիրուած երգչուհի՝
ՍԻԻԶԱՆ ՍԱՐԳՍԵԱՆԻ հետ
Յայտագիրին կրկնութիւնը՝ գիշերուան ժամը 9:00ին:

ԱԶԳԱՅԻՆ Գ. ԶԱԹԱԼՊԱՇԵԱՆ - ԹՈՐԳՈՍԵԱՆ ՎԱՐՄԱՐԱՆ
ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ԵՐԳԻ ԵՐԵԿՈՅ
ՍԵՎԵՆԱԿԱՆՈՒԹԵԱՄՔ՝
ԱՐՄԷՆ ՄՈՎՍԻՍԵԱՆԻ
●Չաբաթ, 2 Մարտ 2002, երեկոյեան ժամը 8:00ին Ս. Յակոբ եկեղեցւոյ «Տիրան Պապիկեան» սրահին մէջ: Կառատունը ապահովուած:
●Կիրակի, 3 Մարտ 2002, երեկոյեան ժամը 6:00ին «Յովհաննէս Պողոսեան» սրահին մէջ:
Սակ՝ 10.000 Լ.ն.
Ծանօթ.- Տոմսերը ստանալ «Վանայ Զայն»-էն Համազգայինի գրախանութէն, դպրոցի քարտուղարութենէն եւ ելոյթի օրերը կ'ընտրեն:

ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ ԵՄԷՆԻ ԿԸ ՇԱՐՈՒՆԱԿԷ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԵՐԵՍՓՈՒՆԱՆՆԵՐՈՒ ԸՆՏ

Խորհրդարանի նախագահ Նեպիի Պըրրի երէկ շարունակեց խորհրդարանի լիազուցումներու ժողովավարական կանոններուն մասին իր խորհրդակցութիւնները երեսփոխաններուն հետ, առ ի պատրաստութիւն կառավարութեան ուղղուած լուսաբանական հարցումներու եւ ըստ էութեան քննարկման նիստին:

Անցեալ շաբաթ պլոքներու նախագահներուն հետ սկսած այս խորհրդակցութիւնները երէկ շարունակուեցան անկախ երեսփոխաններուն հետ, եւ անոնք հետ գումարուած ժողովին Պըրրիի կողքին ներկայ գտնուեցան

խորհրդարանի նախագահ Վահագն Կիւրճեան, նախկին վարչապետ Օմար Քարամէ, նախարար Թալալ Արսլան եւ երեսփոխաններ Պուրթու Վարպ, Նայիր Մուաւատ, Միսայել Տահէր եւ Նիքոլա Տարնուզ, ներկայութեամբ խորհրդարանի փոխ նախագահ Էլի Տըրպլիի:

Վարպ յայտնեց, որ քննարկուած է խորհրդարանի ներքին կանոնադրարարացնելու եւ դիւրացնելու անոր աշխատանքները, որպէսզի նիստերը շատ երկար չտեւեն:

Քարամէ նոյնպէս հաստատեց, որ քննարկուած են ներքին կանոնադրի

կապուած հարցերը, բայց վայն բարեփոխելու հարց չկայ:

Քարամէ քննադատեց այն նախարարները, որոնք հակառակ իրենց այդ պաշտօնին՝ պատկերասփռուած եւ այլ ելոյթներու մէջ ընդդիմադիրներու պէս կ'արտայայտուէին եւ քննադատական խօսքեր կ'ուղղէին նաեւ հանրապետութեան նախագահին: Ան կ'ակնարկէր առողջապահութեան նախարար Սիւլէյման Տրեմժիի վերջին յայտարարութիւններուն:

Արսլան ըսաւ, որ քննարկուած կեդրոնացած է պլոքներուն եւ երեսփոխաններուն խօսքերու տեւողութեան վրայ:

ՆԱԽԱՐԱՐԱՆԵՐ ՖԼԷՅԶԱՆ ԵՒ ՍԱՍՏ ՍՏՈՐԱԳՐԵՑԻՆ ԾՐԱԳԻՐ ՄԸ

Տնտեսութեան նախարար Պասէլ Ֆլէյճան երէկ հաստատեց, որ սպառողի պաշտպանութեան վարչութիւնը կարիքը ունի վերատեսուցութեան ենթակարգելու ոչ միայն իր վարչական գործընթացը, այլեւ մտածելակերպը: Ան յայտնեց, որ նախարարութիւնը պիտի պատրաստէ օրինագիծ մը՝ արդիականացնելու այս վարչութիւնը եւ թափ տալու անոր գործունէութեան:

Ֆլէյճան երէկ պետական վարչաձեռնարկի բարգաւաճման հարցերու պետական նախարար Ֆուատ Սաատի հետ ստորագրեց «մտաւորական» արտադրութեան սեփականատիրութեան պաշտպանութեան վարչութեան թափ տալու ծրագիրը, եւ հոն թղթակցներու հարցումներուն պատասխանած ատեն կատարեց վերոյիշեալ հաստատումը:

Ան նաեւ յայտնեց, որ յաւելեալ արժէքի տուրքի գործադրութեան գծով օրինագիծը վարչութիւններուն ղեկ արշաւը կը շարունակուի, իսկ այս տուրքին գործադրութեան հետ շուկայի վրայ ստեղծուած իրարանցումին պատճառը այն է, որ քաղաքացիները գողացած է այս տուրքին բեռը:

ՆԱԽԱՐԱՐ ՀԱՄՍՈՒՏ ՀԵՌԱԶԱՅՆԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ ՈՒՆԵՑԱԻ ՍՈՒՐԻԱՅԻ ԵՒ ՔԱԹԱՐՅԻ ԻՐ ՊԱՇՏՕՆԱԿԻՑՆԵՐՈՒՆ ՀԵՏ

Արտաքին գործոց նախարար Մահմուտ Համմուտ երէկ հեռաձայնեց սուրիացի եւ քաթարցի իր պաշտօնակիցներուն՝ Ֆարուք Շարէհի եւ Համատ Պըն Ժասէմ Պըն Ժապըր Ալ Սանիի, խորհրդակցելու համար արաբական վեհաժողովի կապուած հարցերուն շուրջ:

Համմուտ երէկ ընդունեց Լիբանանի մէջ պատուով հիւպատոսները, եւ հանդիպումին ընթացքին հաստատեց անհրաժեշտութիւնը ամրապնդելու անոնց ներկայացուցած պետութիւններուն հետ Լիբանանի յարաբերութիւնները: Ան նկատել տուաւ, որ՝ պատուով հիւպատոսներուն կը տրամադրուէին օրէնքներ թողարկելու ընդհանուր դիւրութիւնները:

ԱՐԻՏԻ ԿԸ ՔՆՆԱԴԱՏԷ ՓՐՈ ԻՍՐԱՅԷԼԵԱՆ ՈՒԱՇԻՆԿԹԸՆԻ ԲԱՑԱՅԱՅՏ ԿԵՑՈՒԱԾՔԸ

Տեղեկատուութեան նախարար Ղապի Արիտի եզրապատական «Արարներու Զայն» կայանին տրուած հարցազոյցի մը ընթացքին յոյս յայտնեց, որ Պէյրութի մէջ գումարուելիք վեհաժողովը յատկանշական կ'ըլլայ իր կեցուածքներով եւ որոշումներով, եւ կոչ ուղղեց արաբ ղեկավարներուն՝ բարձրախաղ միջապային շրջադարձութիւններու եւ շրջանային վտանգներու մակարդակին:

«Իսրայէլ կը փորձէ հիմնապատակ կործանել պաղեստինեան իշխանութիւնը եւ անոր դէմ իր մղած ահաբեկչական պատերազմը շրջանը կը տանի բաց հակամարտութեան ուղղութեամբ», ըսաւ Արիտի. քննադատելով Միացեալ Նահանգներու քաղաքացիական կողմնակցութիւնը ի նպաստ Իսրայէլի եւ անոր վարած քաղաքականութիւնը:

Արիտի կոչ ուղղեց օգտուելու Միջին Արեւելքի գծով ելրուական կեցուածքին:

ONE SECOND IS ENOUGH...
Արկածը Կը Պատահէ Երկրորդական Մը Մէջ...

...BUT WE USE THEM ALL.
...ԻՍԿ ՄԵՔ ԵՆԵՐԱՅ ԵՄԷ ԱՄԷՆ ԵՐԿՎԱՐԿԱՆ.
ԱՏՏԻԼ AFHIL
Աֆիտ-ի Եւրո, Բ. Յարկ, Գեո. եւ Ֆարս. (01) 262231-242556-242557
Imm. AFED, 2ème étage. Tél. and Fax: (01) 262231-242556-242557

ՀԱՂՈՐԴԱԿՐՈՒԹԻՒՆ

Հայկապեան համալսարանի հոգաբարձական կապը ուրախութիւնն ունի յայտարարելու նշանակուած Հայկապեան համալսարանին յաջող նախագահին, յանձին՝ վեր. դոկտ. Փոլ Հայտնութեան: Նշանակուած ի պարտ կ'ըլլայ 1 Սեպտեմբեր 2002էն սկսեալ: Վեր. դոկտ. Հայտնութեան պիտի յաջորդէ վեր. դոկտ. Ժան Խանճեանի, որ հանգստեան պիտի կոչուի Օգոստոս 2002ին:

Դոկտ. Հայտնութեան պաշտօնը արեւտից տիտղոսը ստացած է Հայկապեան համալսարանէն, մագիստրոս աստուածաբանութեան տիտղոսը՝ Մերձաւոր Արեւելքի Աստուածաբանական ճեմարանէն, իսկ Քրիստոսընի (Նիւ ձըրպի, Միացեալ Նահանգներ) Աստուածաբանական ճեմարանէն՝ մագիստրոս հոլովական աստուածաբանութեան եւ դոկտորայի տիտղոսները:

Մերձաւոր Արեւելքի Հայ աւետարանական շրջանակներու մէջ առաջնորդութեան բազմաթիւ դիրքերու եւ աշխարհացրի կրթական ունեցիլ մէջ կապուած կրթութիւններու մէջ իր խաղացած կենսական դերերուն կողքին, դոկտ. Հայտնութեան 1993էն ի վեր Պէյրութի Մերձաւոր Արեւելքի Աստուածաբանական ճեմարանին մէջ դասախօս է եւ կը դասաւանդէ հոլովական աստուածաբանութեան եւ քրիստոնէական բարոյագիտութեան վերաբերեալ նիւթեր:

Հայկապեան համալսարանի առաջնորդութեան նուիրեալ մըն է դոկտ. Հայտնութեան. առաջնորդութիւն մը, որ կը շեշտէ կրթական ու մասնագիտական գերազանցութիւն, հասարակական առաջնորդներու եւ գործիչներու պատրաստութիւնն է, ի դէմս ընկերութիւնը յուլող հարցերու, դրական ներդրումի անհրաժեշտութիւն:

ՀԱՅԿԱՊԵԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ՀՈԳԱԲԱՐՁԱԿԱՆ ԿԱԶՄ

ԺԱՆ ՖԱՐԱՃԵԱՆ ՊԱՐԳԵՒԱՏՐՈՒԱԾ Է ԼԻԲԱՆԱՆԻ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՆԵՐՈՒ ՄԻՈՒԹԵԱՆ ՈՍԿԵԱՅ ՇՔԱՆՇԱՆՈՎ

Լիբանանի Ճարտարապետներու Միութեան նախագահ 50 ամեակին տոթով, Շարաթ, 16 Փետրուարին, «Պիլի» սրահին մէջ մեծ շուքով տօնակատարեց իր ոսկեայ յոբելեանը՝ հոլովանորութեամբ նախագահ գոր. Էմիլ Լահուտի: Հանդիսութեան ներկայ էին նախագահի ներկայացուցիչ՝ հաղորդակցութեան միջոցներու նախարար Ժան Քըրտահի, ներկայ եւ նախկին նախարարներ ու երեսփոխաններ եւ շուրջ 3000 ներկաներ:

Հանդիսութեան ընթացքին, առ ի դնհատանք Լիբանանի Ճարտարապետներու Միութեան ներս իրենց ունեցած վաստակին, միութեան ոսկեայ յոբելեանին ոսկեայ շքանշանով մեծարուեցան 20 ճարտարապետներ, որոնց շարքին՝ ճարտարապետ Ժան Ֆարաճեան: Ապա նախագահին անունով խօսք առաւ նախարար Ժան Լուի Քըրտահի, որ շնորհաւորեց ներկաները:

Լիբանանի մէջ աւարտելէ ետք ճարտարապետի եւ քաղաքաշինութեան ակադեմիական ուսումը, Ժան Ֆարաճեան մասնագիտացած է Փարիզի եւ Նիւ Եորքի մէջ: Երկար տարիներ եղած է իբրանաբանական ճարտարագիտական բաժնի պատասխանատու: Փրենսի մէջ շորտարի շարունակ եղած է Միջազգային Առեւտրական Կեդրոնի շինարարութեան տնօրէնը եւ պատասխանատու ճարտարապետը: Նաեւ արաբական երկիրներու համար ուսումնասիրած եւ պատրաստած է շինարարական ծրագիրներ: Իր ասպարէզին ընթացքին Փ. Ֆարաճեան նախաձեռնած եւ իրագործած է իբրանանահայ համայնքի տարբեր կառոյցներու շինարարական ծրագիրները, ինչպէս նաեւ իր ուղղակի ներդրումը ունեցած է Հայաստանի մէջ շինարարական բազմաթիւ ծրագիրներու գործադրութեան մէջ, ինչպէս՝ պետական գրադարանի նորոգութիւնը: Իր մասնագիտութեան ծրագրերը ներս դասախօսութիւններ տուած է Լիբանանի եւ Հայաստանի համալսարաններուն մէջ:

Լիբանանի Ճարտարապետներու Միութեան կողմէ շնորհուած շքանշանը արժանի գնահատանք մըն է Ժան Ֆարաճեանի անձին եւ վաստակին:

Հ. Յ. Դ. ՆԻԿՈԼ ԴՈՒՄԱՆ ԿՈՍԵՏԷ
ԴԱՏԱԿԱՐԱԿԱՑԱԿԱՆ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԸ
ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ԼՍԱՐԱՆ
Նիւթ՝ ՐԱՅ ԴԱՏԸ ԱՅՍՕՐ
Կը ներկայացնեն
ՄԵԼԻՔ ԳԱՐԱԳԱՒՈՐԵԱՆ,
ԶՕՀՐԱՊ ԴԱԶԱՐԵԱՆ
Եւ ԷԼԻ ԹԱՇՇԵԱՆ
Տեղի կ'ունենայ Ուրբաթ, 22 Փետրուար 2002ին, երեկոյեան ժամը 8:00ին, «Նիկոլ Դուման» ակումբի «Սարգիս Ազնաւուրեան» սրահին մէջ:
ՀՐԱՒԵՐ

ԿՈՒՉՈՒԻ

●HAMPY հաստատութիւնը կարիքը ունի երիտասարդ կարուհիներու: Ըն. 01 - 254129:

La Souderie
DE LUNETTES
**La première
au Liban**
Autoroute Jdeideh
Près Boghos Optic
Tél. (01) 871261

STUDIO
Lantern
●Կը ստանձնէ ուրախ առիթներու video նկարահանումներ
Ըն. 01-268866
ԷԼ 03-695399

ՎԵՆԵԶՈՒԵՆԵՍ

ԾՈՎՈՒԺԻ ՀՐԱՄԱՆԱՏԱՐԸ ԿԸ ՊԱՅԱՆՁԷ ՆԱԽԱԳԱՀԻՆ ՀՐԱԺԱՐԱԿԱՆԸ



Նախագահ Չաւէզ

ՔԱՐԱՔԱՍ, 18 (ՌՈՅԹԸՐԸ).- Վենեսուելայի ծովածոցի հրամանատար զոր. Քարլոս Մոլինա երէկ նախագահ Հիւկո Չաւէզը ամբաստանեց իբրեւ ոչ - հայրենասէր նախագահ մը եւ հրապարակաւ պահանջեց ձախակողմեան նախագահին հրաժարականը:

Շարք՝ էջ 10

ՆԱԽԱԳԱՀ ԼԱՀՈՒՏ

ԳՐՈՒՎՏԻՔՈՎ Կ'ԱՐՏԱՅԱՅՏՈՒՄ...

Շարունակուած Ա. էջ 6

Նախագահ Լահուտ նաեւ ըսաւ, որ Լիբանան - Ֆրանսիա գործակցութիւնը անընդհատ կ'ամրապնդուի եւ կը նուիրագործէ Լիբանանի զիրքը որպէս քաղաքակրթութեան միջեւ երկխոսութեան բնական բեմ, եւ այս գործակցութիւնը իր գագաթնակէտին պիտի հասնի Ֆրանսիայի երկիրներու կազմակերպութեան Լիբանանի մէջ գումարուելիք վեճաժողովին ընթացքին: Ան բարձր գնահատեց Եւրոպական Միութեան մէջ Ֆրանսիայի կեցուածքը, որ կը պահանջէ Միջին Արեւելքի մէջ արդար, ամբողջական եւ վերջնական խաղաղութիւն. ան մաղթեց, որ Ե. Միութիւնը նախաձեռնութիւն մը կ'առնէ այս ուղղութեամբ, նկատի առած իր անկողմնակալ կեցուածքը:

Նախագահ Լահուտ այս կեցուածքները արտայայտեց «Էքոլ Փոլիթեքսթիկ» ռեսանդեբոն Լիբանանի այցելող պատուիրակութիւնը ընդունած ատեն:

Նախագահ Լահուտ երէկ ընդունեց նաեւ հաղորդակցութեան միջոցներու նախարար Ժան Լուի Քրըտահին, որուն կ'ընկերակցէր Օսթրոյի նոր նշանակուած վարիչ խորհուրդը:

Տնտեսական եւ ընկերային խորհուրդի նախագահ Ռոսէ Նասանո ներկայացուց խորհուրդի գործունէութեան թիւի տարւոյն համար անոր կազմութեան օրէնքը բարեփոխելու անհրաժեշտութիւնը:

Նախագահը Լիբանանեան համալսարանի նախագահ Իպրահիմ Քրայսիի հետ քննարկեց համալսարանին վերաբերեալ հարցերը:

Նախագահ Լահուտ յետմիջօրէին նախկին փոխ վարչապետ, Երեսփոխան Միշէլ Մըրի հետ քննարկեց տեղական եւ շրջանային հարցեր, ապա ընդունեց այցելութիւնները պետական նախարար Պահիթ Թապաթարայի, կենսոլորտի նախարար Միշէլ Մուսայի եւ աշխատանքի նախարար Ալի Քանտիի:

ԽԱՐԱԶԻ ՊԻՏԻ ՄԵԿՆԻ ՌՈՒՄԻԱ

ԹԵՀՐԱՆ, 18 (ՌՈՅԹԸՐԸ).- Իրան, որ Միացեալ Նահանգներու կողմէ ամբաստանուած է «չարութեան առանցք»ի մը մաս կազմելու յանցանքով, իր արտաքին գործոց նախարարը դէպի դաշնակից Ռուսիա պիտի զբնակէ կապերուն զարկ տալու առաջադրութեամբ:

Հակառակ ամերիկեան դժգոհութեան, Ռուսիա եւ Իրան գիտութեան գործակցութեան առնչուող շարք մը համաձայնագիրներ կնքած են եւ միասնաբար կ'աշխատին հարաւային Իրանի մէջ կորիզային ուժանիւթի գործարանի մը կառուցման համար:

Անոնք նաեւ գլխաւոր երկիրներն են, որոնք զօրավիգ կանգնած են ԱՖղանիստանի Հիւսիսի Դաշինքին, որ ամերիկեան օժանդակութեամբ անցեալ տարեկներին տապալած էր Թալիբան վարչակարգը:

Մակայն, մինչ Ռուսիա զօրավիգ կանգնած է Ուաշինկթընի՝ ահաբեկչութեան դէմ պատերազմին, Իրան կը զգայ, թէ հետզհետէ լուսանցքի մէջ կը ձգուի ԱՖղանիստանի մէջ: Անիկա Ուաշինկթընի կողմէ ամբաստանուած է՝ այդ երկրին մէջ տիրող դերաբեկ խաղաղութիւնը ընթացքէ դուրս բերելու յանցանքով:

Մակայն, Քամալ Ռարազի Երկուշաբթի օր մամուլի ասուլիսի մը ընթացքին յայտնած է, թէ Ռուսիա իր երկրեայ այցելութեան ընթացքին նոր համաձայնագիրներ պիտի չկնքէ:


Ան ըսած է, թէ շրջանին մէջ ամերիկեան քաղաքականութիւնը եւ ԱՖղանիստանի հարցը օրակարգի գլխաւոր նիւթերէն պիտի ըլլան:

ԶԱՐԱՅ ԻՐԱՆ ՊԻՏԻ ԱՅՅԵԼԷ

Միւս կողմէ, Ռարազի յայտնած է, թէ ԱՖղանիստանի փոխանցման հանգրուանի ղեկավար Համիտ Քարազայ յառաջիկայ շաբաթ Իրան պիտի այցելէ, հակառակ ամերիկեան ամբաստանութիւններուն, թէ Թեհրան կը վտանգէ անոր դերաբեկ իշխանութիւնը:

Ան ըսած է, թէ Քարազայի այցելութիւնը ցուցանիչ մը պիտի ըլլայ անոր հանդէպ Իրանեան զօրակցութեան:

Ռարազի շեշտած է, թէ իր երկրը գործօն կերպով պիտի մասնակցի պատերազմին պատճառով քանդուած ԱՖղանիստանի վերակառուցման:



Խարազի

Նիստանի վերակառուցման, քայլ մը, որ նաեւ Իրանի շահերուն պիտի նպաստէ:

«Իրան խաղաղութիւն, կայունութիւն եւ տնտեսական զարգացում կ'ուզէ ԱՖղանիստանի մէջ», ընդգծած է ան:

ՀՆԴԿԱՍՏԱՆ - ՓԱՔԻՍՏԱՆ ՇԱՐՈՒՆԱԿՈՒՈՂ ԲԱՆՈՒՄՆԵՐ

ՃԱՄՈՒ (ՀՆԴԿԱՍՏԱՆ), 18 (ՌՈՅԹԸՐԸ).- Հնդկաստանի եւ Փաքիստանի միջեւ գտնուող Քաշմիրի տագնապալի շրջանին մէջ երէկ երբ ըմբոստներ սպանուեցան՝ ծայրայեղականներու եւ հնդկական ապահովական ուժերու միջեւ տեղի ունեցած բախումի մը ընթացքին:

Սպանուած երեք ծայրայեղականները կը պատկանէին Փաքիստանի զօրակից ծայրայեղական խմբակի մը, որուն գործունէութիւնը արգիլուած է:

Ճամուի Ռաճուրի նահանգին մէջ այլ ծայրայեղականներ ռումբեր արձակեցին դպրոցի մը վրայ՝ քանդելով զայն, սակայն զոհեր չարձանագրուեցան, յայտնեց ոստիկանութիւնը:

Միւս կողմէ, ոստիկանութիւնը հաղորդեց, որ Միլիակարի մէջ Փաքիստանի զօրակից խմբակներու պատկանող ինը ծայրայեղականներ յանձնուեցան պետութեան:

ՐՍՍ Ա. Մ. ԷՍԻՐՈՒԹԻՒՆԵՐՈՒ ՔԱՐԻՒՂԻՆ ՆԱԽԱԳԱՀԻՆ

ՕՓԷՔ ՄԻՆՉԵՒ ՏԱՐԵՎԵՐՁ ԱՆՓՈՓՈՒՄ ՊԻՏԻ ՊԱՅԷ ԲԱՐԻՒՂԻՆ ԱՐՏԱԴՐՈՒԹԻՒՆԸ

ՏՈՒՊԱՅ, 18 (ՌՈՅԹԸՐԸ).- Արաբական Միացեալ Էմիրութիւններու քարիղի նախարար Օպէյտ Պրն Սայֆ Նասերի ըսաւ, որ ՕՓԷՔ հաւանաբար մինչեւ տարեկերջ անփոփոխ պիտի պահէ քարիղի արտադրութիւնը, եթէ արտակարգ իրադարձութիւններ չարձանագրուին՝ պարտադրելով փոփոխութիւնը, հաղորդեց Էմիրութիւններու պաշտօնական լրատու գործակալութիւնը:

ՕՓԷՔ եւ քարիղ արտադրող անկախ հինգ երկիրներու միջեւ համաձայնութիւն մը գոյացած էր Յունուարին, երկու միլիոն տակառով կրճատելու քարիղի արտադրութիւնը՝ յաւելեալ անկումէ փրկելու համար սակերը, որոնք անցեալ տարուան վերջին ամիսներուն մեծ նահանջ արձանագրած էին: ՕՓԷՔի գլխաւոր անդամ Մեուտական Արաբիոյ քարիղի նախարար Ալի Նալիմի անցեալ շաբաթ յայտարարած էր, որ Ռիատ պիտի սպասէ մինչեւ 2003 թուականի սկիզբը՝ վերատեսութեան ենթակելու համար կրճատման որոշումը:

Նասերի, իր կարգին ըսաւ, որ դժուար է այսօրուրէն նախատեսել, թէ ՕՓԷՔ ի՞նչ որոշում պիտի տայ Մարտի հերթական հանդիպումին:

ՈՒԱՇԻՆԿԹԸՆԻ ՀԱՄԱԶԱՅՆ՝ ՈՒՍԱՄԱ ՊԸՆ ԼԱՏԷՆԻ...

Շարունակուած Ա. էջ 6

Դեսպանը կը խօսէր մայրաքաղաք Քապուլի մէջ, ուր ան կը վերաբանար թագաւորութեան դեսպանատունը: Ան ըսած է, թէ ԱՖղանիստանի մէջ կոռուելու մեկնած սէուտցիներ խաբուած են:

Մինչ այդ, աֆղան ռուսաւորներ երէկ իսլամ եւ այլ երկիրներու կողմէ զրկուած առևտրական եւ զինուորական օգանակերով Սէուտական Արաբիա ուղղուած են՝ Մեքքէի մէջ տարեկան հաճին մասնակցելու համար:

Քարազայ օժանդակութեան կողմէ իր ալ երկիրներու, ինչպէս նաեւ սէուտական իշխանութիւններուն, որ երկարաձգեալ կիրակի օրուան ժամկէտը ռուսաւորներու ժամանումին համար:

Ս. Արաբիոյ գահաժառանգ իշխան Ապտուլա Կիրակի օր տեսակցութիւն մը ունեցած է ամերիկեան Մի. Այ. Էյ. Ի տնօրէն Ճորձ Թենըթի հետ, որ շրջանին մէջ շրջապտոյտի մը ձեռնարկած է:

Թենըթ նախապէս այցելած է Եմէն եւ Եգիպտոս ու տեսակցութիւններ ունեցած՝ անոնց նախագահներուն հետ:

Այլ գիծի վրայ, երէկ յատուկ հանդիսութեան մը ընթացքին, ԱՖղանիստանի նոր դրօշակը բարձրացուած է Գանտահար քաղաքին վերեւ, մինչ քաղաքին տարեցները նոր ժամանակաշրջանի մը բացումը կը հռչակէին:

(ՌՈՅԹԸՐԸ)

ԻՍՐԱՅԷԼ ՄՏԱՆՈՎՊՈՒՄՈՒՄՈՒՄ ԴՊԱՂԵՍՏԻՆԵԱՆ ԱՆՁՆԱՍՊԱՆԱԿԱՆ...

Շարունակուած Ա. էջ 6

Կիսինի յայտարարութենէն քանի մը ժամ ետք ինքնաշարժ մը պայթեցաւ Այսրյորդանիանի հրէական բնակեցման վայրի մը մօտ, երեք հոգի վիրաւորեց: Ինքնաշարժը պայթած է իսրայէլեան բանակին մէջ անցարգելի մօտ. անիկա անձնասպանական գործողութիւն մըն է: Աւելի ուշ, երկու իսրայէլացի պիստոլորներ սպաննուեցան եւ 4 ուրիշներ վիրաւորուեցան, երբ պաղեստինցի մը կրակ բացաւ անոնց վրայ, Կապայի մէջ, Կուշ Բարիֆ բնակեցման վայրին մօտ:

ՍԵՆՏԱԿԱՆ ԱՐԱՔԻԱ ԸՆԴԻ ՓՈՒՍԱՐԵՆ ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆ ՊԻՏԻ ԱՌԱՋԱՐԿԵՐ

Սէուտական Արաբիոյ գահաժառանգ իշխան Ապտուլա ըսաւ, որ պատերազմուած էր արտասանելու ձառ մը, ուր իսրայէլի հետ արաբական կապերը պիտի քաջալերէր, եթէ հրէական պետութիւնը հեռանալու գրաւուած հողերէն:

«Նիւ Եորք Թայմս»ի կողմէ հրապարակուած հարցազրոյցին մէջ Ապտուլա ըսաւ սակայն, որ միտքը փոխած է պաղեստինցիներուն հանդէպ իսրայէլի որդեգրած խիստ միջոցառումներուն պատճառով: Ապտուլա ակնարկեց, որ իր ձառնի մէջ պիտի ըսէր, որ իսրայէլ ամբողջական կապեր ու խաղաղութիւն կրնայ հաստատել արաբական երկիրներուն հետ եթէ ամբողջութեամբ պարպէ արաբական գրաւեալ հողերը: Ապտուլա դիտել տուաւ, որ Շարունի քաղաքակրթութիւնը մարեց խաղաղութեան յոյսերը: Սէուտցի իշխանը ակնարկեց, որ ձառը պատրաստ է ու դարակին մէջ կը սպասէ...

Պաղեստինցիները երէկ ողջունեցին Ապտուլա իշխանին կեցուածքը: Պաղեստինցի գլխաւոր բանագնաց Սաէպ Ուրաբա ըսաւ, որ տասնամեակներէ ի վեր արաբական աշխարհին կողմէ այսքան կարեւոր առաջարկ մը չէ ներկայացուած: Ուրաբա ակնարկեց, որ Ապտուլա իշխանին առաջարկը պէտք է լրջուն-

թեամբ նկատի առնուի ու քննարկուի իսրայէլի ու Միացեալ Նահանգներու կողմէ: Արաբաթեւս ողջունեց Ապտուլայի առաջարկը, դիտել տալով, որ անիկա պիտի նպաստէ արդար ու մնայուն խաղաղութեան եւ պաղեստինեան անկախ պետութեան մը հաստատման:

Իսրայէլ մեկնաբանութիւն չկատարեց Ապտուլա իշխանին առաջարկին մասին:

●ԻՍՐԱՅԷԼԻ արտաքին գործոց նախարար Շիմոն Փերէս ըսաւ, որ Եւրոպայ պէտք է զօրավիգ կանգնէ Միացեալ Նահանգներու ահաբեկչութեան դէմ պայտերապիին, ո՛չ թէ դիրքորոշումներ ունենայ պաղեստինեալիսրայէլեան տագնապին կողմերուն մէկուն ի նպաստ: Փերէս ակնարկեց, որ Եւրոպայի համար լաւ չէ ներկայանալ իբրեւ պաղեստինցիներուն համակիր, մինչ Ուաշինկթըն պիտի ներկայանայ իբրեւ իսրայէլի համակիր: Փերէս կոչ ուղղեց Եւրոպական պետութիւններուն, որ ո՛չ պաղեստինցիներուն, ո՛չ ալ իսրայէլի համակիր դառնալով դիրքորոշումներ ունենան:

Միւս կողմէ, ներքին գործոց նախարարութիւնը յայտնեց, որ իսրայէլի իսլամական Շարունի ղեկավարին արգիլուեցան արտասահման ճամբորդել՝ հրէական պետութեան ապահովութեան սպառնացող մտահոգութեան պատճառով: Նախարարութեան կողմէ հրապարակուած յայտարարութեան համաձայն, Շիմոն Պերէսուտիկանութիւնը մտահոգութիւն յայտնած է Ռաստ Սայախ Միւլէյմանի արտասահման մեկնելու որոշումին մասին՝ զգուշացնելով, որ ճամբորդութիւնը կրնայ վնասել իսրայէլի ապահովութեան: Միւլէյմանի ղեկավարած շարժումը կը ներկայացնէ իսրայէլի մէջ ապրող մօտաւորապէս 560 հազար իսլամ-արաբներ:

(ՌՈՅԹԸՐԸ)

ԳՈՐԾԱԾԵՑԷՔ FUEL CARDԸ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԾՐԱԳԻՐՆԵՐՈՒ ՅԱՉՈՂՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

ԻՆՉՊԵՍ ԳՈՐԾԱԾԵՑ FUEL CARD-Ը

Ձեր ինքնաշարժին պենզին, մագնիս, իւղի, ինչպէս նաեւ լուսլու համար, վճարումից հետ միաժամանակ ցերեկայացուցեք FUEL CARD-ը, այս ձեւով ձեր մասնակցութիւնը բերած կ'ըլլաք տնտեսական ծրագիրներու յաջողութեան:

ԻՆՉՊԵՍ ՍՏԱՆԱԿ FUEL CARD-Ը

FUEL CARD-ը կրնաք ստանալ հետեւեալ կերպով: ● ԱՅՏԻԼԻ գրասենեակ, Պուրճ Լամուտ ● Շամազ գալիսի գրախանութ, Պուրճ Լամուտ ● Գրատուն Caravelle, Չալքա ● Գրատուն Sava, Այնճար ● Գրատուն Կոմիտաս, Պէյրութ ● Obelix հաստատութիւն, Անթիպաս



FUEL CARDԸ ԿՐՆԱՔ ՕԳՏԱԳՈՐԾԵԼ ԸՏԵՆԵԱԿԱՆ ԿԱՅԱՐԱՆՆԵՐՈՒՆ ՄԵՁ

- 1. CORAL JAL EL DIB, ծել էլ Տիպ
2. HYPCO ANTELIA, Շարաք Ալ Դաուարճ
3. SPEED ANTELIA, Կաթողիկոսարանի դիմաց
4. CORAL BAABDAT, Պապուտ մայրուղի
5. SPEED ACHRAFIEH, էլ Նաիր PEUGEOT ընկ. առաջ
6. HYPCO HAMRA, Պանք Տի Լիպանց առաջ
7. MEDCO KARANTINA, Զարանքիմայ մայրուղի
8. CORAL BHAMDOUN, Դամակոսի մայրուղի
9. CORAL MAR MIKHAEL, Մար Միխայել, Սաստ պողոտայ
10. SPEED ALITTIHAD, Կալեի Իքթիսա
11. MANAR FANAR, Ֆանար, Նաւոր պանդոկից կից
12. CALTEX ANJAR, Այնճար
13. BASSIL DORA, Տրայի կամուրջ
14. ՄԱՅԱԿԱՆ ԿԱՅԱՐԱՆ, Տրաք, «Ալմազ»ի կից
15. ԱՐԳԻՍԵՆ ԿԱՅԱՐԱՆ, Պուրճ Լամուտ, Սիւն էլ Ֆիլի մայր պողոտայ

Յաւելեալ մանրամասնութեանց համար հեռաձայնել՝ 01-242556 թիւին:

Մագնիս սպասարկութեան համար հեռաձայնել՝ 04-715111, 04-715222 եւ 04-715333 թիւերուն:

ԶԱՐՏԸ ԿԸ ՍՏԱՆԱՔ ԶՐԻՕՐԵՆ

ԱՐԾԷՔԱՐՈՐ ՆՈՒԷՐՆԵՐ ԵՒ ԻՆՔՆԱՇԱՐԾ ԸԸ

ՀԱՅ ԴԱՏ

ՀԱՅ ԴԱՏ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ ԻՐ ԱՆՈՆԳՈՒՆԵԼԻ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ ՀԱՍԱՐ ԻՍՐԱՅԷԼԻ ԴԵՍՊՈՒՆԸ ՊԵՏՔ Է ՀԱՅԱՍՏԱՆԻՆ ՎՏԱՐՈՒԻ

Երեւանի մէջ հայ թղթակիցներու հետ իր հանդիպումին ընթացքին, նախանշելով շարքաք, Հայաստանի մէջ Իսրայէլի դեսպան Ռիվա Քոհնէն (ԳետաՎայր՝ Թիֆլիս) Հայկական Յեղասպանութեան մասին կատարեց անընդունելի յայտարարութիւններ:

Ռ. Քոհնէն Հայկական Յեղասպանութիւնը ողբերգութիւն կոչեց եւ ըստ, որ ան չի կրնար բաղդատուիլ Հրեական Ողջակիցումից հետ: Ան հաստատեց, որ Իսրայէլի պետութիւնը ու ժողովուրդը վրդոված են պատմական այդ իրողութեան: «Ամէն մարդ պետք է յիշէ այսպիսի ողբերգութիւններ», շեշտեց ան: Մերժելով գուգահեռ գծել Հայկական Յեղասպանութեան եւ Ողջակիցումի միջեւ՝ Քոհնէն ըստ. «Ողջակիցումը իւրատուութեան երեւոյթ էր, որովհետեւ ան մարդը ազգ մը բնաջնջելու կամխամածուած ծրագիր մըն էր: Այս հանգրուանին, որեւէ բան պետք չէ բաղդատուի Ողջակիցումին հետ»:

Ռ. Քոհնէնի Հայկական Յեղասպանութեան ժխտումները կը համապատասխանեն այս հարցին նկատմամբ իր կառավարութեան կեցւածքին: Անցեղան տարի հաղորդուեցաւ, որ արտաքին գործոց նախարար Շիմոն Փերեսն Գոյնամման արտայայտութիւն մը ունեցած է: Հայեր գայրացան, որ Իսրայէլի արտաքին գործոց նախարարը կը գորակցի Թուրքիոյ Հայկական Յեղասպանութեան ժխտումին մէջ: Անոնք Փերեսը դատապարտող ցամաքային կարգի եւ խմբագրականներ գրեցին: Իսրայէլացի կարգ մը ուսումնասիրողներ իրենց կարգին արտաքին գործոց նախարարը

պիտի ստեղծէ: Սակայն հայերը շատ ընտրանք չունին: Ռ. Քոհնէնի յայտարարութիւնները անտեսելով՝ Հայաստանի պետութիւնը մեղսակից կ'ըլլայ Հայկական Յեղասպանութեան անոր ժխտումին եւ քաջալերած կ'ըլլայ, որ այլ ազգերու ներկայացուցիչներ մնան անընդունելի կեցուածքներ ողբերգութեան:

Երեւակայեցիք, թէ ի՞նչպէս պիտի հակադրէր Իսրայէլի պետութիւնը, եթէ Հայաստանի պագայ դեսպան մը յայտներ, թէ Ողջակիցումը ողբերգական դէպք մըն էր եւ ոչ՝ Յեղասպանութիւն եւ չէր կրնար բաղդատուիլ Հայկական Յեղասպանութեան հետ:

24 ժամ չամբողջացած Իսրայէլ պիտի վտարէր Հայաստանի դեսպանը: Արդարեւ, Իսրայէլ այսպիսի խիստ քայլ մը պիտի առնէր ոչ միայն Հայաստանի պէս պատկեր կրնար մը դէմ, այլ՝ Գոյնամմանէն հոգ Երկիրներու դիւանագիտական ներկայացուցիչներուն դէմ (մէջը ըլլալով նաեւ Միացեալ Նահանգներու դեսպանը): Թուրքիոյ վերաբերմունքը տարբեր պիտի չըլլար: Եթէ Իսրայէլի դեսպանը Անգարայի մէջ մամուլային առաջին մը ընթացքին Հայկական Յեղասպանութիւն բաները գործածած ըլլար, Թուրքիա, հակառակ Իսրայէլի հետ իր սերտ կապերուն, անմիջապէս պիտի չվտարէր իր այդ դեսպանը: Արդարեւ, քանի մը տարի առաջ, երբ Իսրայէլ Թուրքիոյ մէջ ճոր դեսպան մը նշանակեց, Թուրքիոյ պետութիւնը չմերժեց այդ նշանակումը այն հիման վրայ, թէ տարիներ առաջ Իսրայէլի միջոցաւ տարիներ մը հետ հարցազրոյցի մը ընթացքին դեսպանը Հայկական Յեղասպան

ԹՈՒՐՔԻԱ ՇՐՋԱՆԻՆ ՄԷՉ ՏԻՊԱՐ ԵՐԿԻՐ ՄԸ ՉԷ

Այս յօդուածը հիմնուած է Արեւելեան Ամերիկայի Հայ Դատի Յանձնախումբի տնօրէն Արին Գրիգորեանի 23 Յունուար 2002ին «Ուաշինկթըն Թայմս»-ին ուղարկած նամակին վրայ: Նամակը գրուած է իբրև հակադարձութիւն՝ Պրու Ֆէյնի «Երկու անգամ օրինուած վարձարութիւններ քաղէլ» յօդուածին («Ուաշինկթըն Թայմս», 15 Յունուար 2002): Ֆէյնի յօդուածը յստակ քարոզչութիւն մըն է թրքական լուսին, որ միջազգային հանրային կարծիքին կ'ուզէ վստահեցնել, թէ յետ Սեպտեմբեր 11ի աշխարհին մէջ Թուրքիա «տիպար» դեր կը խաղայ:

Կը գրեմ արտայայտելու համար ամերիկահայ գաղութին յուսախարութիւնը «Ուաշինկթըն Թայմս»-ի նկատմամբ, որ իր էջերը տրամադրած է Պրու Ֆէյնի՝ սխալ տեղեկութիւններ եւ յերիւրանքներ տարածելու համար: Յունուար 15ի անոր ակնարկը «Երկու անգամ օրինուած վարձարութիւններ քաղէլ», կը պարունակէ բազմաթիւ հաստատումներ, որոնք կը խեղաթիւրեն պատմութիւնը՝ Թուրքիան սրբացնելու եւ վարձարութիւններով ու թշնամութեամբ լեցուն անոր պատմութիւնն ու ռազմարժեքները հեռացնելու համար:

Սկսելու համար, անիրաւութիւն գործած կ'ըլլաք ձեր ընթերցողներուն նկատմամբ, եթէ պարզապէս չի՜ շէք, թէ՛ «Պրու Ֆէյն ընդհանուր պատուիրակն է հանրային իրաւարանական խմբակի մը՝ Օրէնքի եւ Յանձնառութեան կեդրոնին, որուն կեդրոնատեղին կը գտնուի Վիրճինիոյ մէջ»: Այդ միակ հաստատումով Ֆէյն սխալ ձեռով կը ներկայացնէ ինքզինք՝ ծածկուելու համար այն իրողութիւնը, թէ ինք գործակաւորն է Թուրքիոյ կառավարութեան հանրային յարաբերութիւններու համակարգին, որ կը գործէ միլիոնաւոր ստալարներով: Ֆէյն ոչ միայն փաստաբան մըն է, այլեւ Թուրքիոյ ֆինանսաւորած թրքական լուսինի մէկ թեկն՝ Թուրք - Ամերիկեան կազմակերպութիւնը Համադրումարին ընդհանուր պատուիրակն ու գործակից ուսումնասիրողն է: Այս իրողութիւնը պէտք է բացատրէ, թէ Ֆէյն ինչո՞ւ առանց վարանելու կ'աջակցի Թուրքիոյ:

Այժմ անցնելով յօդուածին՝ Ֆէյնի ամէնէն գայթակղեցուցիչ հաստատումներէն մէկն այն է, թէ՛ «Թուրքիա ինքզինք փաստեց՝ իբրեւ կարեւոր դաշնակից մը իրաքի դէմ Պարսից ծոցի պատերազմին մէջ»: Նիւ Եորք Թայմս»-ի եւ «Պոսթըն Կոլդի» լուրերու արհիւններուն արագ նայուածք մը ցոյց պիտի տայ, թէ Թուրքիա՝ չըջանին մէջ ՕՍԸ-ի անդամ միակ պետութիւնը, Թուրքիոյ եւ իրաքի քիւրտներուն դէմ գործուած մարդկային իրաւունքներու բազմաթիւ բռնաբարումներէն զատ ոչ մէկ քայլ առաւ Մոնթի պատերազմին ընթացքին:

Այլ առասպել մը, զոր Ֆէյն կը հաղորդէ այն է, թէ՛ «ՕՍԸ-ի անդամակցութեան սկիզբէն ի վեր Թուրքիա Միացեալ Նահանգներուն հաւատարիմ եւ իրաւարան դաշնակից մը եղած է»: 1976 - 1983ի միջեւ, հակառակ ՕՍԸ-ի ընդդիմութեան, 1986ի «Մոնրոյի Համաձայնագիր»-ի ուղղակի խախտումով, Թուրքիա արտօնեց խորհրդային երեք օդանաւակիրներու, որպէսզի Վսփորի ու Տարտանէլի նեղուցներէն անցնին Միջերկրական:

1979ին Թուրքիա չարտօնեց, որ օդային իր տարածքը գործածուի իրանի մէջ ամերիկացի զբոսնորները ազատելու համար:

Մօտաւորապէս տասնամեակ մըն է, որ Թուրքիա արգիլած է Հայաստանի տրամադրուող ամերիկեան մարդասիրական օժանդակութիւններուն անցքը օդային իր տարածքէն: Թուրքիա նոյնիսկ կասեցուց 1988ի կործանիչ երկրաշարժէն ետք ամերիկեան մարդասիրական օժանդակութիւններու Հայաստան հասնելը: Այդ պատճառով էր, որ Միացեալ Նահանգներու Քոնկրէսը որդեգրեց Մարդասիրական Օժանդակութիւններու Անցքի Օրէնքը՝ ամերիկեան օգնութիւն արգիլելով որեւէ երկիր, որ կը խափանէ ամերիկեան մարդասիրական օժանդակութիւններու երրորդ երկրի մը փոխարինումը: Այս օրէնքը գործադրուեցաւ միայն Թուրքիոյ պարագային, որովհետեւ ամերիկեան մարդասիրական օժանդակութիւն խափանող միակ երկիրն էր:

Մօտաւորապէս քառորդ դար առաջ էր, որ Թուրքիա բռնի ուժով դառնեց Հիւսիսային Կիպրոսը՝ պատերազմելով այլ դաշնակիցի մը՝ Յունաստանին դէմ եւ խախտելով ՄԱԿի եւ ՕՍԸ-ի համաձայնագրերն ու միջազգային օրէնքը: Այսօր, հակառակ Միացեալ Նահանգներու, ՄԱԿի եւ ԵՄ-ի արտաքական Համայնքի ջանքերուն, Թուրքիա կը մերժէ Կիպրոսէն հեռանալ: Ուրիշ, նուազ ծանօթ իրողութիւն մըն ալ այն է, թէ Պաղ պատերազմի ընթացքին Թուրքիա տարբեր ձեւերով նոյնքան օգտուեցաւ խորհրդային Միութենէն, որքան՝ Արեւմուտէն:

Ֆէյն իր յօդուածը կը շարունակէ՝ հաստատելով, որ՝ «Թուրքիոյ մարդկային իրաւունք սահմանադրական եւ օրէնսդրական բարեխառնումները գնահատելի են անկիրանդարձային եղած են»: Ընդհակառակը, Թուրքիոյ մէջ մարդկային իրաւանք բռնաբարումները համատարած են: «Եմընսի Ինթըրնէշնըլի Միջազգային Խորհուրդը այսպիսի օրինակ մը կ'ընդգրծէ 8 Նոյեմբեր 2001ի լուրի մը մէջ. «Հակառակ Թուրքիոյ կառավարութեան բոլոր յայտարարութիւններուն, տակաւին չենք տեսած շարժարանքի եւ այդ շարժարանքը կիրարկողներուն դէմ պայքարելու լուրջ եւ ազդու միջոցներու որեւէ փորձ»:

Լուրը կը շարունակէ՝ ըսելով. «Թուրքիոյ մէջ ձեռքարկուածներուն աչքերը հարցաքննութիւններու ընթացքին սովորաբար, եւ երբեմն ոստիկանական բանտարկութեան ընթացքին կը ծածկուին, որպէսզի կարելի չըլլայ շարժարանքը ճանչնալ: Բիրտ ծեծերը, մերկացնելը, սեռային բռնաբարումներն ու մահուան սպառնալիքները, հոգեբանական այլ շարժարանքներն ու ելկերական ցնցումները, թեւեթէն

կախելը, բռնէլ, ուտելիքէ, ջուրէ եւ բնական պէտքերէ զրկումները Թուրքիոյ մէջ շարժարանքի եւ վատ վերաբերմունքի ընդհանրացած միջոցներ են»:

Այլ յերիւրանք մը, զոր Ֆէյն կը կրկնէ, այն է, թէ՛ «Թուրքիա իսլամութեան պատմութեան մէջ միակ օրինակն է, որ կը կիրարկէ աշխարհիկ եւ ժողովրդավարական աշխատելաձեւ»: Իրականութիւնը այն է, որ Թուրքիա աշխարհիկ ժողովրդավարութեան զատ ամէն ինչ է: Երբ Քեմալ Աթաթիւրք հիմնեց Թուրքիոյ Հանրապետութիւնը, ան զինուորականութեան վերապահեց արտաքին քաղաքականութեան եւ ազգային անվտանգութեան հարցերը: Մինչեւ օրս զինուորականութիւնը վերջին խօսքը ունի երկրի ղեկավարման մէջ:

Նաեւ՝ ոչ մէկ ժողովրդավարութիւն կը սահմանափակէ կրօնի ազատութիւնը: 78 տարիներու իր գոյութեան ընթացքին, Թուրքիա հակառակ Լօզանի դաշնագրին, շարունակած է կրօնական խտրականութիւնը: Աւելի քան 70 տարի Թուրքիա կիրարկած է մշակութային չափազանց խտրական քաղաքականութիւն մը՝ միեւնոյն տան մերժելով իր քրտական փոքրամասնութիւններուն արտայայտութեան ազատութիւն տալ:

Ֆէյն իր ակնարկը կը շարունակէ՝ յայտնելով, թէ՛ «Թուրքիոյ ձեռք Ուաշինկթընը՝ սրբացուած Քեմալ Աթաթիւրքը, աշխարհիկ կարգերը ամրագրեց Թուրքիոյ սահմանադրութեան մէջ որուն մէջ, անոր ոգին մնաց նոյնքան կայուն եւ շողջողուն իբրեւ Հիւսիս Աստղը»: Իրականութեան մէջ Մուսթաֆա Քեմալ Աթաթիւրքը անձամբ պատասխանատու էր 1922ի Իզմիրի հրկիզումին, որուն թնթացքին աւելի քան 150 հազար հայեր եւ յոյներ ջարդուեցան:

Մուսթաֆա Քեմալ Աթաթիւրք ուղղակիօրէն մասնակից էր փոքրամասնութիւնները ընչելու Թուրքիոյ պետութեան արշաւին: 1934ին Թուրքիոյ պետութիւնը (դարձեալ անտեսելով Լօզանի դաշնագիրը) որդեգրեց թիւ 2510 օրէնքը՝ երկրին որոշ շրջաններու մէջ ցեղային կառուցանածքը վերադասաւորելու համար: Օրէնքը ճշգրէ երեք տարածքներ, որոնցմէ մէկը կը ներկայացնէ շրջաններ, ուր միայն բնիկ Թուրքներ կրնային ապրիլ: Թուրքիոյ պետութիւնը առիթը օգտագործեց արեւելեան Թուրքիոյ իր հրէական փոքրամասնութիւնը վտարելու համար: Ոչ միայն հրէական գաղութը հալածանքի ենթարկուեցաւ, այլ նաեւ՝ պուլկարական եւ յունական գաղութները: Արդեօք Ֆէյն այս մէկը իբրեւ աշխարհիկ ժողովրդականութեան օրինակ կը նկատէ:

Մ. ՆԱՀԱՆԳՆԵՐ Կ'ՈՒՉԵՆ ՆՈՒԱՉԵՑՆԵԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՕԺԱՆԴԱԿՈՒԹԻՒՆԸ

Միացեալ Նահանգներու Հայ Դատի Յանձնախումբը անցեալ շաբաթ տեղեկացուց, թէ նախագահ Պոլի Վարչակարգը 2003ի արտաքին օժանդակութիւններու գծով վերջերս առաջարկած է Հայաստանին տրամադրուելիք գումարը նուազեցնել 20 միլիոն տոլարով, իսկ Ազգային Կրթութեան տրամադրելու յաւելեալ 2,7 միլիոն տոլար: Հայ Դատի Յանձնախումբին համաձայն, նախկին խորհրդային Միութեան նորանկախ երկիրներէն Հայաստանի համար առաջարկուած է օժանդակութեան ամէնէն բարձր տոկոսի նուազեցումը:

Յանձնախումբի վարիչ տնօրէն Արամ Համբարեան մտահոգութիւն յայտնեց Հայաստանի օժանդակութեան նուազեցման համար, սակայն յոյս յայտնեց, որ Քոնկրէսը առաջարկը կը մերժէ եւ այլ տարիներ նման, այս տարի եւս կ'աւելցնէ Հայաստանի օժանդակութիւնը:

Բացատրելով, որ Թուրքիոյ եւ Ազգային Կրթութեան Հայաստանի շրջափակումը տարեկան 570 - 722 միլիոն տոլարի վնաս կը պատճառէ Հայաստանի տնտեսութեան, Հայ Դատի Յանձնախումբը շեշտեց, որ Միացեալ Նահանգներու օժանդակութիւնը կրնայ նուազեցնել հսկայական այս վնասը: Յանձնախումբը հաղորդեց, որ Համաշխարհային Դրամատան համաձայն, Հայաստանի շրջափակումը հիմնականօրէն տնտեսական երկու մարզերու վրայ կ'ազդէ. նախ՝ ներքին համախառն արտադրանքին 30 - 38 առ հարիւր տոկոսի վնաս կը պատճառէ, ապա՝ արդէլը կը հանդիսանայ Հայաստանի արտադրութիւններուն 50 առ հարիւրիկ արտաձեւ: Յանձնախումբը աւելցուց, որ այս շրջափակումին յառաջացուցած տնտեսական տագնապը պատճառ դարձած է մօտաւորապէս 800 հազար հայերու արտագաղթին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲՈՂՈՔԱԳԻՐ ԿՐ ՆԵՐԿԱՅԱՑՆԵ ԻՍՐԱՅԷԼԻ

Հայաստանի արտաքին գործոց նախարարութիւնը բողոքագիր մը յղած է Իսրայէլի արտաքին գործոց նախարարութեան՝ Հայաստանի եւ Վրաստանի մէջ Իսրայէլի դեսպան Ռիվա Քոհնէնի Հայկական Յեղասպանութեան մասին վերջերս կատարած յայտարարութեան համար:

Բողոքագիրին մէջ կը նշուի, որ Հայաստան անընդունելի կը գտնէ Հայկական Յեղասպանութեան իրողութիւնը հերքելու կամ նսեմացնելու որեւէ փորձ: Աւելին. Հայաստան երբեք նպատակ չէ ունեցած գուգահեռներ գծել Հայկական Յեղասպանութեան եւ Հրէական Ողջակիցումի միջեւ՝ գտնելով, որ մարդկութեան հանդէպ գործուած որեւէ ոճիւր «եզակի», իր քաղաքական, իրաւական, պատմական եւ բարոյական հետեւանքներով:

«ԱՐՄԵՆՓՐԵՍ»

Նախանշելով Ուրբաթ, երեւանի մէջ իր մամուլային ընթացքին, Իսրայէլի դեսպանը նաեւ յայտնեց, որ Հայաստանի արտաքին գործոց նախարարութեան պատուիրակութիւնը մը յարաջիկայ ամիս Իսրայէլ պիտի այցելէ եւ թէ՛ Ամենայն Հայոց Գարեգին Բ. կաթողիկոսը Մայիսին երուսաղէմ պիտի մեկնի: Այս երկու այցելութիւններն ալ պետք է վերատեսուութեան ենթարկուի: Իսրայէլի պետութեան պետք է յստակ ձեռով ըստի, որ Իսրայէլի հետ գործելը սովորականի պէս չեն կրնար ընթանալ, մինչեւ որ Հայկական Յեղասպանութեան նկատմամբ իր անընդունելի կեցուածքը փոխուի:

Կարծես Հայկական Յեղասպանութեան մասին կատարած իր յայտարարութիւնները բաւարար չէին, Ռ. Քոհնէն համարակալութիւնը ունեցաւ յայտարարելու, որ անձնական

ՅԱՐՈՒԹ ՍԱՍՈՒՆԵԱՆ «Քալիֆորնիա Քոնրէրը» Ծարը՝ էջ 10

ն ու թ ե ա ն մասին հաստատում մը կատարած էր: Հակառակ անոր որ նշանակուած դեսպանին հետ կ'սցէ ի նկատարում ամբաստանութիւնները սխալ դուրս եկաւ, Թուրքիա բացարձակապէս տեղի տալով: Վերջապէս Թուրքիան իր օրէնքներով, Իսրայէլի պետութեան հետ իր սերտ կապերուն, անմիջապէս պիտի չվտարէր իր այդ դեսպանը: Արդարեւ, քանի մը տարի առաջ, երբ Իսրայէլ Թուրքիոյ մէջ ճոր դեսպան մը նշանակեց, Թուրքիոյ պետութիւնը չմերժեց այդ նշանակումը այն հիման վրայ, թէ տարիներ առաջ Իսրայէլի միջոցաւ տարիներ մը հետ հարցազրոյցի մը ընթացքին դեսպանը Հայկական Յեղասպան

ն ու թ ե ա ն մասին հաստատում մը կատարած էր: Հակառակ անոր որ նշանակուած դեսպանին հետ կ'սցէ ի նկատարում ամբաստանութիւնները սխալ դուրս եկաւ, Թուրքիա բացարձակապէս տեղի տալով: Վերջապէս Թուրքիան իր օրէնքներով, Իսրայէլի պետութեան հետ իր սերտ կապերուն, անմիջապէս պիտի չվտարէր իր այդ դեսպանը: Արդարեւ, քանի մը տարի առաջ, երբ Իսրայէլ Թուրքիոյ մէջ ճոր դեսպան մը նշանակեց, Թուրքիոյ պետութիւնը չմերժեց այդ նշանակումը այն հիման վրայ, թէ տարիներ առաջ Իսրայէլի միջոցաւ տարիներ մը հետ հարցազրոյցի մը ընթացքին դեսպանը Հայկական Յեղասպան

ՀԱՄԲԻԿ ՍԱՍՈՒՆԵԱՆԻ ՀԱՍՏԵՆ
HAMPIG SASSOUNIAN
CSP - L.A.C. B - 5 - 131 44750
60-TH ST. WEST LANCASTER,
CA, 93536 — USA

ԱՌՈՂՋԱՊԱՇԱԿԱՆ

ԿՐԱԻՈՐԱԿԱՆ ԿԵՐՊՈՎ ԾԽՈՂՆԵՐԸ ՇՆՉԱՌԱԿԱՆ ՅԱԻԵԼԵԱԼ ՀԱՐՑԵՐՈՒ ՎՏԱՆԳ ԿԸ ԴԻՄԱԳՐԱԻԵՆ


Կրաւորական կերպով ծխողներու մասին կատարուած մեծագոյն ուսումնասիրութիւններէն մէկը ցոյց տուած է, որ ծխախոտին վնասները շնչարգելութեան եւ շնչառական այլ հարցերու վտանգը կ'աւելցնէ չծխողներուն մօտ: Այդ վտանգը տարածուած է բազմաթիւ երկիրներու յատկապէս աշխատանքի վայրերուն մէջ:

Տեղեկագիրը, որ վերջերս լոյս տեսած է «Տը Լաւ-սէթ» բժշկական թերթին մէջ, տեղեկութիւններ օգտագործած է եւրոպական 13 երկիրներու, Աւստրալիոյ, Նոր Զելանտայի եւ Մ. Նահանգներու մէջ 36 կեդրոններէ եկած շուրջ 8000 չափահասներու մասին:

Անոնք հարցաքննութիւններու ենթարկուած են՝ իբրեւ կրաւորական ծխողներ եւ ֆիզիքական քննութեան ենթարկուած են գտնելու համար իրենց առողջութեան վրայ ծխախոտի ծուխին ազդեցութիւնը:

Հետազոտողները գտած են, որ կրաւորական կերպով ծխելը չափահասներու մօտ ուժեղ ազդեցութիւն ունի շնչարգելութեան եւ շնչառական ախտանշաններու վրայ, ինչպէս՝ գիշերային շնչասպառութեան, ֆիզիքական գործունէութենէ ետք շնչասպառութեան եւ այլ հարցերու վրայ:

Շուէտի «Արատեմիսթա Սիուխուսթ»ի մասնագէտներէն տոքթ. Բրիսթըր Եանսըն կ'ըսէ, թէ կրա-



Կրաւորական կերպով ծխելը կը զարգանայ աչիպալատքի վայրերու մէջ եւ մեծ ազդեցութիւն կ'ունենայ շնչարգելութեան եւ շնչառական հարցերու վրայ:

Կրաւորական կերպով ծխելու մասին բազմաթիւ տեղեկագիրներ հրատարակուած են նախապէս, ինչ կը վերաբերի երեխաներու վրայ անոր ազդեցութեան, սակայն անիկա այսքան լայնածիր ձեւով չափահասներու մօտ ազդեցութեան մասին չէ ուսումնասիրուած: 36 կեդրոններէն 12ին մէջ հետազոտութեան մասնակցողներուն կէսէն աւելին կանոնաւոր կերպով, առանց ուզելու ծխախոտի ծուխին ենթակայ է:

Երկիրներու միջեւ տարբերութիւնները զարմացուցած են հետազոտողները: Օրէնքները եւ ծխախոտի գործածութեան համեմատութիւնները մեծագոյն տուեալներն են, որոնք կը ճշդեն մարդոց ծխախոտի կրաւորական ծուխին ենթակայ ըլլալը, կ'ըսէ տեղեկագիրը:



Երկրան կրնայ օգնել շնչարգելութեան տառապողներու ախտաճանաչմանը մեղմացնելու:

Իտալիա, Սպանիա եւ հարաւային ու կերտնական եւրոպական այլ երկիրներ, ուր ծխողներու աւելի մեծ թիւ մը կայ, քան՝ սկանտինաւեան երկիրներուն, Աւստրալիոյ, Նոր Զելանտայի եւ Մ. Նահանգներու մէջ:

Տեղեկագիրին համաձայն, աշխատանքային վայրերու մէջ կրաւորական կերպով ծխողներու համեմատութիւնը կը տարբերի 2,5 առ հարիւրէն՝ Ուիսալայի մէջ (Շուէտ) 53,8 առ հարիւրի միջեւ՝ Կալտաբաոյի մէջ (Սպանիա):

Ուսումնասիրութիւնը գտած է, որ յստակ կապ մը գոյութիւն ունի աշխատանքի վայրերուն մէջ կրաւորական կերպով ծխելու եւ շնչարգելութեան միջեւ:

Եանսըն կ'ըսէ, թէ ընկերութեան եւ մանաւանդ աշխատանքի վայրերու մէջ առանց ուզելու ծխախոտի ծուխին ենթակայ ըլլալը նուազեցնելը հաւանաբար շնչառութեան կապուած առողջութիւնը պիտի բարելաւէ:

Կրաւորական կերպով ծխելը կապուած է առողջական շարք մը բարդութիւններու, որոնց կարգին՝ սրտի հիւանդութեան, կաթնուածի, թոքերու քաղցկեղի եւ շնչարգելութեան:

ՏՈՒՆԸ ՎՏԱՆԳԱՌՈՐ ԳՕՏԻՆ ԿՐԱԻՈՐԱԿԱՆ ԾԽՈՂՆԵՐՈՒՆ ՀՎՄԱՐ

Բրիտանիոյ «Իմփիրըլ Բիւսըր Ռիսըրչ Ֆանտի» գիտնականները կ'ըսեն, թէ մարդիկ, որոնք կ'ապրին

օրական մօտաւորապէս 15 գլանիկ ծխող անձերու հետ, չորս անգամ աւելի հաւանականութիւն ունին ուրիշներու ծխախոտի ծուխին ենթակայ ըլլալու, քան՝ ծխախոտէ զերծ տուներու մէջ ապրողներ:

Գիտնականները ուսումնասիրած են աւելի քան 9000 չծխողներու եւ անոնց կողակիցներուն արեան մէջ ցիրքիցի տարբերակները իրեն արդիւնք արտադրող քրօթիցի համեմատութիւնները:

Անոնք գտած են, որ համեմատութիւնը մէկ միլիլիթր փլասմայի մէջ 0,31 ցամաքամաս մէկ անոնց մօտ, որոնց տունը ծխողներ չկան, 1,25՝ անոնց մօտ, որոնց կողակիցները օրական 15էն 19 գլանիկ կը ծխեն եւ 1,99՝ անոնց մէջ, որոնք կ'ապրին օրական 30 կամ աւելի գլանիկ ծխողներու հետ:

Հետազոտողները կ'ըսեն, որ ուսումնասիրութիւնը յստակ փաստ կը հայթայթէ, թէ ծխողները իրենց սիրելիները կ'ենթարկեն թոքերու քաղցկեղի եւ սրտի հիւանդութեան յաւելեալ վտանգի:

ՕԳԻ ԱՊԱԿԱՆՈՒՄԸ ԱՆՉԱՓԱՀԱՍՆԵՐՈՒ ՄՕՏ ԿԸ ՊԱՏՃԱՌԷ ՇՆՉԱՐԳԵԼՈՒԹԻՒՆ

Երեխաներ, որոնք մարզանքներու կը հետեւին բացօթեայ վայրերու մէջ, ուր օդի ապականուժը բարձր համեմատութիւններու կը հասնի, երեքէն չորս անգամ աւելի հաւանականութիւն ունին շնչարգելութենէ տառապելու քան՝ այլ երեխաներ:

Հարաւային Քալիֆորնիոյ համալսարանին բժշկագիտութեան Քէյզ դպրոցին մասնագէտներուն կողմէ կատարուած ուսումնասիրութիւնը մը ցոյց տուած է, որ օդոնի բարձր համեմատութիւններ կրնան պատճառ դառնալ երեխաներու մօտ շնչարգելութեան ի յայտ գալուն:

Շնչարգելութիւնը երեխաներու մօտ ամէնէն քրո-ցիք հիւանդութիւնն է. անոր համեմատութիւնները աճ կ'արձանագրեն բարգաւաճ երկիրներու մէջ: Սակայն գիտնականները չեն գիտեր՝ ինչու՞:

Մասնագէտները հարաւային Քալիֆորնիոյ մէջ 5 տարեկան ընթացքին շուրջ 3500 երեխաներ ուսումնասիրած են: Անոնց 265ին մօտ առաջին անգամ ըլլալով շնչարգելութեան ախտաճանաչում կատարուած է:

Երեխաներ, որոնք օգոնի բարձր համեմատութիւններ արձանագրող շրջաններու մէջ երեք կամ չորս օր բացօթեայ մարզանքներու կը հետեւէին, երեք անգամ աւելի հաւանականութիւն ցուցաբերած են շնչարգելութենէ տառապելու, քան այն երեխաները, որոնք որեւէ մարզանքի չեն հետեւիր:

Յաւելեալ վտանգ չէ նկատուած այն վայրերուն մէջ, ուր օդոնի համեմատութիւնները ցած եղած են:

Հետազոտող տոքթ. Ռոպ Մքոնըլ կ'ըսէ, թէ ուսումնասիրութիւնը փաստ է, որ «հակառակ աւանդական իմաստութեան» օգոնը դերակատարած է մեծ համեմատութեամբ մարզանքներու հետեւող երեխաներու մօտ շնչարգելութեան յայտնուելուն:

«Ասիկա ստոյգ փաստ չէ, թէ օդի ապականուժը շնչարգելութիւն կը պատճառէ, սակայն անիկա մէկ կտորը կրնայ ըլլալ շնչարգելութեան բարդ փագը-լին», կը յայտնէ ան:

Մասնագէտին համաձայն, ուսումնասիրութենէն բխած թելադրանքը պէտք է ըլլայ հետեւեալը՝ մարզանքը իսկապէս առողջարար է երեխաներու համար՝ բազմաթիւ պատճառներով եւ պէտք է քաջալերել երեխաները խմբային մարզանքներու հետեւելու: Սակայն այն օրերուն, երբ ապականուժի համեմատութիւնները շատ բարձր են, երեխաները պէտք է սահմանափակեն բացօթեայ երկարատեւ մարզանքները: Հետազոտողներու կարծիքով, բարձր համեմատութիւններով օգոնի շրջաններու մէջ գործօն երեխա-

ԾԽԵԼԸ ՎԻՐԱԲՈՒԺՈՒԹԵԱՆ ԿԱՊՈՒԱԾ ԲԱՐԳՈՒԹԻՒՆՆԵՐԸ Կ'ԱՒԵԼՑՆԷ

Դանիացի բժիշկները վիրաբուժութիւն դիմազարաւող ծխողներու կը թելադրեն գործողութենէ երկու ամիս առաջ ծխելը դադարեցնել՝ յետվիրաբուժութեան բարդութիւնները նուազեցնելու համար:

Գոփենհակընի Պիտիբալիբըկ համալսարանի հիւանդանոցային հետազոտողները ուսումնասիրած են ծխախոտի գործածութեան ազդեցութիւնը յետվիրաբուժութեան բարդութիւններու համեմատութիւններու վրայ, հիւանդներու մօտ, որոնք կոնքի եւ ծունկի հաւանականութիւն ունին սրտի կամ թոքերուն կապուած հարցերէ կամ վիրաբուժութենէ ետք լաւ արտի հիւանդութեան յաւելեալ վտանգի:



Ծխելը յետվիրաբուժութեան բարդութիւնները կ'աւելցնէ:

Ծխախոտի ծուխը վնասակար ազդեցութիւն ունի սրտին, թոքերուն եւ մարմնին բնական պաշտպանութեան վրայ: Ասիկա կը նշանակէ, թէ ծխողները աւելի մեծ հաւանականութիւն ունին սրտի կամ թոքերուն կապուած հարցերէ կամ վիրաբուժութենէ ետք լաւ արտի հիւանդութեան յաւելեալ վտանգի:

Ասիկա կը նշանակէ, թէ ծխողները աւելի մեծ հաւանականութիւն ունին սրտի կամ թոքերուն կապուած հարցերէ կամ վիրաբուժութենէ ետք լաւ արտի հիւանդութեան յաւելեալ վտանգի:

տրուած է իրենց ծխելու սովորութենէն հրաժարելու կամ գէթ նուազեցնելու անոր համեմատութիւնը, նուազ հաւանականութիւն (18 առ հարիւր) ցուցաբերած են բարդութիւններէ տառապելու, քան անոնք, որոնք օժանդակութիւն չեն ունեցած (52 առ հարիւր):

Անոնք 6 անգամ նուազ հաւանականութիւն ցուցաբերած են վէրքերու բուժումի հետ կապուած հարցեր դիմազարաւորելու միջոցով հաշտուելու օր նուազ պահուած են հիւանդանոց, քան անոնք, որոնք չեն նուազեցուցած ծխելը:

Հետազոտող տոքթ. Անն Մոլլըր կ'ըսէ, թէ ծխելը վտանգաւոր տրեւեալ մըն է վէրքերու բորբոքումի համար, ինչպէս նաեւ՝ սրտի եւ թոքերու կապուած բարդութիւններու, որեւէ տեսակի վիրաբուժութեան պարագային:

Բրիտանիոյ Օքսֆորտ համալսարանի ծխախոտի դէմ արշաւի մասնագէտ փրօթ. Կոտֆրի Ֆաուլըր կը յայտնէ, թէ յայտնաբերումները անակնկալ չեն:

«Հետզհետէ աւելի ու աւելի փաստեր կը յայտնաբերուին ծխախոտի դադարեցման օգտակարութեան մասին», գիտել կու տայ ան:

Եթէ անձ մը վիրաբուժութեան պիտի ենթարկուի, լաւ առիթ մը կ'ըլլայ անոր համար ծխելը դադարեցնելու, կ'աւելցնէ Ֆաուլըր:

«Մարդիկ յաճախ հարց կու տան, թէ որքա՞ն պէտք է սպասեն ծխելէ հրաժարելու քայլին օգուտները քաղելու համար: Այս պարագային օգուտը շատ արագ կը զգացուի», կ'ընդգծէ ան:

ԾԽՈՂՆԵՐԸ Կ'ԱՆՏԵՍՆ Կ'ԱՍՏԵՆ Կ'ԱՍՆՊԵՆ ԶԳՈՒՇԱՅՈՒՄԸ»

Հազի վտանգ դիմազարաւող ծխող մարդոց մեծամասնութիւնը չի գիտակցիր, որ անիկա կրնայ թոքերու մասնաջուր հիւանդութեան մը ախտանշաններէն մէկը ըլլալ, ըստ Բրիտանիոյ մէջ կատարուած հարցազրկոյցի մը արդիւնքներուն:

Հինգ ծխողներէ մէկը կը տառապի մնացուած հազէ, սակայն անոնց երեք - չորսերը չի գիտեր, թէ կը տառապի թոքերու յատուկ հիւանդութենէ մը (Սի. Օ. Փի. Տի.), որ տարեկան Բրիտանիոյ մէջ 30 հազար զոհ կը խլէ:

ներ աւելի մեծ քանակութեամբ օգոն կը հասցնեն իրենց թոքերուն, որովհետեւ աւելի արագօրէն եւ խորունկ ձեւով կը ներշնչեն:

Բրիտանիոյ Շնչարգելութեան Ազգային Արշաւորմաքի մասնագէտներէն փրօթ. Մարթին Փարթրիճ կ'ըսէ, որ ցարգ փոսակաւ ուսումնասիրութիւնները փաստած են, որ օդի ապականուժը գոյութիւն ունեցող շնչարգելութիւնը աւելի ծանրակշիռ կը դարձնէ, սակայն չէ փաստուած, որ անիկա թերեւս կրնայ շնչարգելութիւն պատճառել, ինչ որ տակաւին անըստոյգ կը մնայ:

Ան կը յայտնէ, որ եթէ փաստուի, որ ապականուժը տուեալ մըն է, անիկա միայն մէկը կրնայ ըլլալ բազմաթիւ տուեալներէ, որոնք պատճառ կը դառնան, որ մարդիկ այսօր շատ աւելի մեծ համեմատութիւններով շնչարգելութեան հարց դիմազարուեն, քան՝ 20-30 տարի առաջ:

Օգոնը, որ թթուաթթիւնի երեք հիւլէներէ կազմուած անկայուն մոլեքիւլ մըն է, կենսական վահան մը կը հայթայթէ միջնուրտի վերին խաներուն մէջ՝ անդրմանիչակազոյն վտանգաւոր ճառագայթներուն դէմ:

Գետնի պարագային, ուր օգոնը կ'արտադրուի ինքնաշարժներու ծուխերուն եւ ճարտարարուեստական արտանետումներուն պատճառով, անիկա չափազանց արտաբերուող նիւթ մըն է եւ քաղաքներու սմոկին մէջ մեծ դերակատարութիւն ունի:

Երեք տարի առաջ Բրիտանիոյ մէջ կատարուած ուսումնասիրութիւնը մը գտած է, որ երկրին մէջ տարեկան աւելի քան 12 հազար հոգի կանխահասօրէն կը մահանայ օգոնի պատճառով:

ԵՈՒՎԱՆ ԿՐԱՅ ՕԳՆԵԼ ՇՆՉԱՐԳԵԼՈՒԹԵՆԸ ՏԱՌԱՊՈՂՆԵՐՈՒՆ

Երկրային վրայ հիմնուած խոկումի տեսակ մը կրնայ կարգ մը մարդոց մօտ շնչարգելութեան ախտանշանները մեղմացնել, ըստ նորագոյն հետազոտութիւններէն մէկուն:

Այսուհանդերձ փաստեր չկան, թէ հանդարտեցնող այլ միջոցներ օգտակար կրնան ըլլալ:

Բրիտանիոյ էքսըթըր համալսարանին կողմէ կատարուած երկու ուսումնասիրութիւններ քննած են տարբեր թեքիքներ:

Մասնագէտները խոկումի Սահայա միջոցին դիմող հիւանդներ բարդատեղ են խոկումի այլ խմբակի մը հետ, որ կ'օգտագործէր հանդարտեցնող այլ ձեւեր, ինչպէս՝ մկաններու աստիճանաբար հանդարտեցում, եւ այլն:

Ռոկումի Սահայա միջոցին նպատակն է «մտային առաւելագոյն արթնութեան» վիճակ մը ստեղծել:

Հետազոտողները գտած են, որ չորս ամիս ետք, այն հիւանդները, որոնք թեքեւորէն շնչարգելութեան հարցեր կը դիմազարուեն, եւ որոնք աւանդական դեղերու դարմանումին դրականօրէն չեն հակադարձեր, յստակ տարբերութիւններ նկատած են:

Անոնց զգացած յաւելեալ ազդեցութիւնը նման եղած է միւս խմբակին, որուն անդամներուն տրուած է շնչարգելութիւնը հանդարտեցնող դեղի յաւելեալ տոկոս:

Այսուհանդերձ նկատուելի տարբերութիւններ ի յայտ չեն եկած ընդհանուր «կեանքի որակ»ին մէջ:

Տոքթ. Ճոն Հարվի կ'ըսէ, թէ դարմանութիւն կը վայելեն հիւանդներու մօտ, որոնք կը փորձեն մեղմացնել իրենց վիճակին հոգեկան եւ ֆիզիքական ախտանշանները:

«Հանդարտեցնող պարզ թեքիքներ եւ մարզանքներ կրնան օգնել շնչառութեան կանոնաւորման եւ նաեւ թոքերու աշխատանքին բարելաւման», կը յայտնէ ան:

Հետեւաբար կարգ մը հիւանդներ կրնան երկան օգտակար գտնել՝ ախտանշաններու մեղմացումին համար, սակայն, կը շեշտէ Հարվի, հանդարտեցնող որեւէ միջոց պէտք չէ մտոցնել յայն աւանդական դեղերով դարմանումներու անհրաժեշտութիւնը:

Մ Ա Ր Զ Ա Կ Ա Ն



ԱՇԽԱՐՀ



ՊԱՍԵԹՊՈԼ

Հ.Մ.Ը.Մ.Ի ՏԳՈՑ ԵՐԿՐՈՐԴ 3ԱՂԹԱՆԱԿԸ

Լիբանանի պասեթպոլի տղոց Բ. դասակարգի ախոյեանութեան ֆայնլ ֆորի իր կատարած երկրորդ մրցումին, Հ.Մ.Ը.Մ.Ի տղոց ներկայացուցչական խումբը, արձանագրեց իր երկրորդ յաղթանակը, այս անգամ 77 - 74 արդիւնքով պարտութեան մատնելով ԱՀիաս Ռիատան: Եթէ Հ.Մ.Ը.Մ. վաղուան երրորդ հանդիպումին ալ յաղթանակ մը արձանագրէ, պիտի ապահովէ աւարտական մրցումին իր տոմսը, առանց կայտալ ըլլալու իր կատարելիք մնացեալ երկու մրցումներուն արդիւնքներէն:

Աղջկանց Ա. դասակարգի ախոյեանութեան ֆայնլ ֆորի մրցումներուն, Հ.Մ.Ը.Մ.Ի ներկայացուցչական կազմը երէկ 66 - 42 արդիւնքով պարտութեան մը կրեց Սաֆասէն: Հ.Մ.Ը.Մ.Ի կազմը այժմ 2 - 0 արդիւնքով պարտուած է, նկատի ունենալով, որ առաջին մրցումին (Շարաթ օր) անիկա դաշտ չէր ներկայացած:

«ՉԷՍՓԻԸՆԶ ԼԻԿ»Ի ՄՐՅՈՒՄՆԵՐԸ ԿԸ ՎԵՐՍԿԱՆ ԱՅՍՕՐ

Բաւական երկար դադարէ մը ետք, այսօր կը վերսկսուին «ՉԷՍՓԻԸՆԶ ԼԻԿ»ի Բ. հանգրուանի մրցումները, երբ տեղի կ'ունենան երթի վերջին ճակատումները: Այսօրուան յայտագրին վրայ են չորս ճակատումներ՝ Գ. եւ Դ. խմբակէն ներս, իսկ վաղուան յայտագրին վրայ՝ դարձեալ չորս ճակատումներ, Ա. եւ Բ. խմբակներէն ներս:

Այսօրուան կարեւորագոյն մրցումը պիտի ըլլայ Եուվենթուս - Տեփորթիո Բորուսա, ինչպէս նաեւ Պայէր Լեւերքուզըն - Արսենալ հանդիպումը:

Ստորեւ՝ այսօրուան եւ վաղուան մրցումներուն յայտագիրը:

ԱՅՍՕՐ
Գ. խմբակ
Ռեալ Մատրիո (Սպանիա) - Փորթո (Փորթուգալ)
Սփարթա Փրակա (Չեխիա) - Փանաթինայոս (Յունաստան)
Դ. խմբակ
Պայէր Լեւերքուզըն (Գերմանիա) - Արսենալ (Անգլիա)
Եուվենթուս (Իտալիա) - Տեփորթիո Բորուսա (Սպանիա)
ՎԱՂԸ
Ա. խմբակ
Պուալիս (Փորթուգալ) - Պայէր Միլի (Գերմանիա)
Նանթ (Ֆրանսա) - Մանչեսթըր Եունայթըտ (Անգլիա)
Բ. խմբակ
Պարսելոնա (Սպանիա) - Ա. Էս. Ռոմա (Իտալիա)
Լիվըրպոլ (Անգլիա) - Կալթասարայ (Թուրքիա)

ՅՐԱՆՍԱՅԻ ՖՈՒԹՊՈԼԻ ԱՆՈՅԵՄՆՈՒԹԻՒՆ

ԼԻՈՆ ԿԸ ՄՕՏԵՆԱՅ ՊԱՐԱԳԼՈՒԽԻ ԼԱՆՍԻՆ

Ֆրանսայի ֆուտպոլի ախոյեանութեան 26րդ հանգրուանի մրցումներուն, 2րդ դիրքը գրաւող Լիոն աւելիով մտնեցաւ պարագլուխի դիրքը գրաւող Լանսի եւ իր արձանագրած յաղթանակէն ետք, այժմ միայն երկու կէտով ետ կը մնայ անկէ, որ շարքի վերջին 1 - 1 արդիւնքով հաւասարութիւն մը արձանագրեց վերջին դիրքը գրաւող Լորիանի հետ: 10րդ վայրկեանին Շարլ - Էտուար Բորիտոն նշանակեց Լանսի կողմէ, իսկ Ժան - Քլոտ Ծարլըի՝ հեր կազմին կողմ (45րդ):

Լիոն իր դաշտին վրայ 3 - 0 արդիւնքով պարտութեան մատնեց Փարիզ Մէն ժերմէնը, որ նահանջեց 4րդ դիրք, իր տեղը գրեց Օքսէֆոր, որ 2 - 1 արդիւնքով յաղթական վերադարձաւ Թրուսի դաշտէն: Ֆրե-տերիք Տեհիւ (61րդ) սխալմամբ իր ընդդէմն ներս, Սոնի Անտրեսոն (76րդ) եւ Ժուլիան Գերնամպուրան (86րդ) նշանակեցին Լիոնի կողմը: Մարաքաղաքի կազմը մրցումը աւարտեց տասը մարզիկով, կապրիէլ Հայնցի կարմիր քարտ ստանալէն ետք:

Մարսէյ 1 - 0 արդիւնքով պարտութեան մատնեց ետք նախափերջին դիրքը գրաւող Մէսը, բարձրացաւ 8րդ դիրք եւ բաւական հեռացաւ վտանգաւոր դասին: Լամիոն Սալո նշանակեց յաղթական կազմին կողմ: Պորտո 3 - 1 արդիւնքով պարտութեան մատնեց Մոնպելիէն: Փետրո Փաուլթիս նշանակեց երկու կողմ (22րդ եւ 51րդ):

Ստորեւ՝ 26րդ հանգրուանի մրցումներուն արդիւնքները:	
Լիոն - Փարիզ Մ. ժերմէն	3 - 0
Մարսէյ - Մէս	1 - 0
Նանթ - Լիլ	0 - 1
Պասթիա - Սոչո	3 - 0
Պորտո - Մոնպելիէ	3 - 1
Կեկկան - Ռեկն	1 - 1
Լանս - Լորիան	1 - 1
Սքտա - Մոնպրո	0 - 0
Թրուս - Օքսէֆ	1 - 2

ԴԱՍԱԻՈՐՈՒՄ	ԿԷՏ
1.- Լանս	52 (41 - 17)
2.- Լիոն	50 (53 - 27)
3.- Օքսէֆ	45 (32 - 21)
4.- Փարիզ Ս. ժ.	42 (32 - 20)
5.- Լիլ	39 (29 - 24)

ՉՄԵՌՆԱՅԻՆ ՈՂԻՄՊԻԱԿԱՆ (ՍՈԼԹ ԼԷՅՔ ՍԻԹԻ)

ԳԵՐՄԱՆԻԱ ՆՈՐՎԵԿԻԱՅԵՆ ԽԼԵՑ ՊԱՐԱԳԼՈՒԽԻ ԴԻՐԸ

Սուլթ Լէյք Սիթիի մէջ տեղի ունեցող 2002ի Չմեռնային Ողիմպիականի մրցումներուն, որոնք արդէն իսկ թեւակոխած են իրենց 11րդ օրը, Գերմանիա երէկ գրաւեց պարագլուխի դիրքը, երեք ոսկի մետալ շահելէ ետք:

Գերմանիա իր առաջին ոսկի մետալը շահեցաւ տղոց պոպայէյտի պոլօի մրցումներուն, շնորհիւ՝ Քրիսթօֆ Լէնկընի եւ Մարքու Չիմըրմէնի:

Տղոց դահուկարշաւի խմբային մրցումներուն (երկար հեռաւորութեան վրայ ցատկէլ), Գերմանիա շահեցաւ իր երկրորդ ոսկի մետալը, շատ չնչին



Քրիս Ուիթթ

ճանազրեւով մէկ վայրկեան 13'' 83 արդիւնք մը: 2րդ հանդիպումը (Գերմանիա), իսկ երրորդ՝ Ճենիֆըր

մետալը, շնորհիւ Ալիսա Քեմփլինի՝ աղջըկանց պատ դահուկարշաւի մրցումներուն: Նշենք, թէ Աւստրալիա Չմեռնային Ողիմպիականի մրցումներուն կը շահէր իր երկրորդ ոսկի մետալը (իր պատմութեան մէջ): 2րդ հանդիսացաւ Վերոնիքա Պրեյնըր (Քանադա), իսկ երրորդ անոր պազակիցը՝ Տերրա Տրոն:



Գերմանիոյ տղոց դահուկարշաւի խումբը

տարբերութեամբ մը գերապանցելով 2րդ դիրքը գրաւող Ֆինլանտան: Գերմանիա յաջողեցաւ հաւաքել 974,1 կէտ, իսկ Ֆինլանտա՝ 974,0 կէտ: 3րդ դիրքը գրաւեց Սլովենիա՝ 946,3 կէտով: Գերմանիա իր այս յաղթանակը արձանագրեց շնորհիւ Սվէն Հանաուալտի: Սթեֆան Հոքքէի, Միքայէլ Ուրմանի եւ Մարթին Շմիթի:

Գերմանիա յաջողեցաւ շահիլ իր երրորդ ոսկի մետալը՝ դարձեալ խմբային մրցումներուն, սակայն այս անգամ աղջկանց դահուկարշաւի մրցումներուն, արձանագրելով 1 ժամ 27' 55'' արդիւնք մը: Երկրորդ հանդիսացաւ Նորվեկիա (1 ժամ 28' 25''), իսկ երրորդ՝ Ռուսիա (1 ժամ 29' 19''): Գերմանիոյ յաղթանակը արձանագրեցին Քաթրին Էփրլ, Ուշի Տիւլ, Անտրէա Հենքըլ եւ Քէյթի Ուիլիս:

Միացեալ Նահանգներ շահեցան իրենց չորրորդ ոսկի մետալը, շնորհիւ հապարմէթը աղջկանց սիլիտ սքէյթին կի մրցումներուն: Քրիս Ուիթթ (26 տարեկան) ոչ թէ միայն ոսկի մետալի մը տիրացաւ, այլ հաստատեց աշխարհի նոր մրցանիշ մը, ար-

Ռոպրիկէյ (Մ. Ն.): Վերջապէս, Աւստրալիայի տղոց



Սթիւարտ Պրեյնըր

րալիա շահեցաւ երէկուան հինգերորդ ոսկի

Ստորեւ՝ մետալներուն դասաւորումը 11րդ օրուան մրցումներէն ետք.

	ՈՍԿԻ	ԱՐԾ.	ՊՐ.
1.- Գերմանիա	8	10	6
2.- Նորվեկիա	8	6	0
3.- Մ. Նահանգներ	4	7	7
4.- Ռուսիա	4	4	3
5.- Իտալիա	3	2	2
6.- Ֆինլանտա	3	2	1
7.- Չուիլցերիա	3	1	2
8.- Ֆրանսա	2	3	1
9.- Նորվեկիա	2	2	0
10.- Զանստա	2	1	4
11.- Աւստրալիա	2	0	0
11.- Սպանիա	2	0	0
13.- Աւստրիա	1	3	9
14.- Խրուաթիա	1	1	0
14.- Հարաւայից Զորէա	1	1	0
16.- Չինաստան	1	0	2
17.- Եսթոնիա	1	0	1
17.- Պուկարիա	0	1	2
18.- Շուէտ	0	1	2
20.- Ճապոն	0	1	1
20.- Լեհաստան	0	1	1
22.- Չեխիա	0	0	1
22.- Սլովենիա	0	0	1

ԱՆԳԼԻՈՅ ՖՈՒԹՊՈԼԻ ԲԱԺԱԿԻ ՄՐՅԱՇԱՐԸ

Անգլիոյ ֆուտպոլի բաժակի մրցաշարին Ե. հանգրուանի մրցումներուն, արձանագրուեցան հետեւեալ արդիւնքները:

Չէլսի - Փրեսթըն (Ա.) 3 - 1

Էվըրթըն - Քրու (Ա.) 0 - 0	Կիլինկէմ (Ա.) 5 - 2
Նիքէլ - Մանչ. Սիթի (Ա.) 1 - 0	Միտլսոլմոս - Պլեյքլըն 1 - 0
Թոթէնհամ - Թանմիր (Բ.) 4 - 0	Ուոլսոլ (Ա.) - Ֆուլհէմ 1 - 2
Արսենալ -	Ուէսթ Պրոմուիչ (Ա.) - Չէլսի (Գ.) 1 - 0

ՔԱԼՉԻՕ

ԵՆՈՒՎԵՆԹՈՒՄ՝ ՊԱՐԱԳԼՈՒԽԻ ԴԻՐԸԻՆ ԿՐԱՅ

Իտալիոյ ֆուտպոլի ախոյեանութեան (Քալչիօ) 23րդ հանգրուանի մրցումներուն, պարագլուխի դիրքը գրաւող Եուվենթուս 2-1 արդիւնքով պարտութեան մատնեց նախափերջին դիրքը գրաւող Ֆիորենթինան, որ մրցումը աւարտեց տասը մարզիկով, Անտրէա Թարոզի կարմիր քարտ ստանալէն ետք (72րդ): Տալիտ Թրեզեկէ (11րդ) եւ Ալեսանտրո Տէլ ֆիեռօ (30րդ) նշանակեցին Եուվէի կողմը, իսկ Ատրիանօ Ֆիորենթինայի կողմ (14րդ):

Ինթէր Միլան 3-0 արդիւնքով յաղթական վերադարձաւ Վերոնայի դաշտէն, շնորհիւ՝ Քրիսթիանօ Չանեթթի (31րդ) եւ Քրիսթիան Վիբրի (57րդ եւ 60րդ) նշանակած կողմերուն: Իր արձանագրած այս յաղթանակէն ետք, Ինթէր գերազանցեց Ա. Էս. Ռոման իր կողմը վերջին շնորհիւ, որ 0-0 արդիւնքով հաւասարութիւն մը արձանագրեց Պրեյնըրի հետ (15րդ): Նոյն արդիւնքով վերջ գտաւ Ա. Սէ. Միլան - Աթալանթա մրցումը:

Շարաթավերջին տեղի ունեցած մրցումներուն, սակայն, մեծագոյն յաղթականը եղաւ Փիաչենցա, որ 5-0 արդիւնքով ծանր պարտութեան մատնեց վերջին դիրքը գրաւող Վենեցիան:

Ստորեւ՝ 23րդ հանգրուանի մրցումներուն արդիւնքները:

Պրեյնթա - Ա. Էս. Ռոմա	0 - 0
Լացիօ Ռոմա - Քիեռօ Վերոնա	1 - 1
Փարմա - Թորինօ	0 - 1
Փերուցիա - Լեչէ	2 - 1
Փիաչենցա - Վենեցիա	5 - 0
Ուտինեթէ - Պոլոնիա	0 - 1
Վերոնա - Ինթէր Միլան	0 - 3
Եուվենթուս - Ֆիորենթինա	2 - 1
Ա. Սէ. Միլան - Աթալանթա	0 - 0

ԴԱՍԱԻՈՐՈՒՄ

1.- Եուվենթուս	47 (43-16)
2.- Ինթէր Միլան	46 (40-19)
3.- Ա. Էս. Ռոմա	46 (33-14)
4.- Էրեռօ Վերոնա	38 (41-34)
5.- Պոլոնիա	38 (25-23)
6.- Ա. Սէ. Միլան	35 (31-24)
16.- Լեչէ	20 (22-35)
17.- Ֆիորենթինա	17 (24-46)
18.- Վենեցիա	15 (20-39)

ՊՈՒՆՏՍԵԼԻԿԱ

ՏՈՐԹՄՈՒՆՏ - ՇԱԼԻԲ՝ 1-1

Գերմանիոյ ֆուտպոլի ախոյեանութեան (Պունտսլիկա) 23րդ հանգրուանի մրցումներուն, շարքուս գագաթի ճակատումը՝ պարագլուխի դիրքը գրաւող Պորուսիա Տորթմունտի եւ Շալթի (4րդ) միջեւ վերջ գտաւ 1-1 արդիւնքով: Աւելի քան 68 հապար համակիրներու ներկայութեան Նիլս Ռոնէ Քամփիլոն նշանակեց իր կապիտան կողմ (17րդ), իսկ Էփրթոն՝ Տորթմունտի կողմ (50րդ):

Անոր այս հասաւորութեան չկրցաւ օգտուիլ 2րդ դիրքը գրաւող Պայէր Լեւերքուզըն, որ իր կարգին հասաւորութիւն մը արձանագրեց նախափերջին դիրքը գրաւող Չանքթ Փաուլիի հետ (2-2): Դաշտին տէրերը իրենց հասաւորութեան կողմ նշանակեցին մրցումին վերջին վայրկեանին... փենսիթով: Պայէրի կողմը նշանակեցին Ուլֆ Քիրշթըն (5րդ) եւ Միքայէլ Պայաք (70րդ):

Պայէրն Միլնիի 2-0 արդիւնքով յաղթական վերադարձաւ Ֆրայպուրկի դաշտէն, արձանագրելով եղանակի իր 12րդ յաղթանակը: Պիտերթ Լիսարպո (32րդ) եւ Ճիլմանի Էլպեր (41րդ) նշանակեցին Պայէրի կողմը:

Համպուրկ կրեց եղանակի իր 10րդ պարտութիւնը, 2-1 արդիւնքով պարտուած հեռանալէ ետք Պորուսիա Տորթմունտի դաշտէն: Համպուրկ Բ. կիսախաղը թէւ աւարտեց տասը մարզիկով, սակայն արդէն իսկ մրցումին երեք կողմը նշանակուած էին Ա. կիսախաղին:

Ստորեւ՝ 23րդ հանգրուանի մրցումներուն արդիւնքները:

Քոպուս - Հանպա Ռոսթըր	3 - 0
Քեօլն - Վերտըր Պրեյնթ	0 - 0
Պորուսիա Տորթմունտ - Շալթ	1 - 1
Քայլըրպաուրըն - Նիւրնպերկ	2 - 1
Պորուսիա Մեօնշթըն - Համպուրկ	2 - 1
Չանքթ Փաուլի - Պայէր Լեւերքուզըն	2 - 2
Ֆրայպուրկ - Պայէր Միլնի	0 - 2
1860 Միլնիի - Հերթա Պերլի	0 - 3
Շթուրկարթ - Վոլֆսպուրկ	2 - 1

ԴԱՍԱԻՈՐՈՒՄ

1.- Պորուսիա Տորթմունտ	48 (38-16)
2.- Պայէր Լեւերքուզըն	46 (53-29)
3.- Քայլըրպաուրըն	45 (45-29)
4.- Շալթ	42 (36-23)
5.- Պայէրն Միլնի	41 (41-19)
16.- Նիւրնպերկ	22 (22-40)
17.- Չանքթ Փաուլի	16 (25-45)
18.- Քեօլն	15 (11-40)

